

## ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

### Սահմանադրական Դատարանը Խարխափումի մէջ

Հայաստանի քաղաքական հրապարակին վրայ կը շարունակեն այժմեական մնալ Սահմանադրական Դատարանի շուրջ ստեղծուած իրավիճակը ու անկէ բխող զարգացումները:

Սահմանադրական Դատարանի անդամներու լիազօրութեան մասին նորընտիր դատաւոր Վահէ Գրիգորեանի կատարած յայտարարութիւններէն ետք, Դատարանի ճակատագրին շուրջ կ'ընթանան բուռն քննարկումներ: Իշխանութեան կողմնակիցներու կարծիքով, գործող Դատարանը չի համապատասխաներ յեղափոխական Հայաստանի պահանջներուն, անոր նկատմամբ հասարակութեան մօտ կայ վստահութեան պակաս ու հրատապ կը նկատուի կազմի վերանորոգման անհրաժեշտութիւնը: Հակառակ կողմի կարծիքով Դատարանը կը շարունակէ մնալ օրինաւոր ու որեւէ ոտնձգութիւն անոր դէմ, կը նկատուի երկրի սահմանադրական կարգի տապալում: Իսկ ինչ կը վերաբերի բուն Դատարանին ու անոր նախագահ Զրայր Թովմասեանին, ապա ան իր վերջին քայլերով եկաւ աւելի եւս խորացնելու ճգնաժամը ու վարկաբեկելու այդ Մարմինի դիրքն ու հեղինակութիւնը:

Վարչապետ Նիկոլ Փաշինեան, որ բաւական ատենէ լռութիւն կը պահէր ստեղծուած ճգնաժամի վերաբերեալ, «Ազատութիւն» ռատիոկայանին տրուած հարցազրոյցի մը ընթացքին յայտարարեց, որ ցնցուած է կարգաւոր դատաւոր Վահէ Գրիգորեանի բաց նամակը, միաժամանակ խոստովանելով որ 2017-ին կեդրոնացած ըլլալով Սերժ Սարգսեանի շուրջ ստեղծուող քաղաքական իրավիճակին վրայ, չեն նկատած Սահմանադրական Դատարանի մէջ տեղի ունեցող զարգացումները, որոնց հետեւանքով Դատարանի հին անդամները պիտի շարունակեն մնալ ցկեանս, իսկ Դատարանի նախագահը մինչեւ 2035 թուականը, անհմատ դարձնելով նոր Սահմանադրութեամբ նախատեսուած բարեփոխումները:

Փաշինեանի այս յայտարարութեան վերաբերեալ Զրայր Թովմասեանի կարծիքը հարցնող լրագրողներուն ան պատասխանեց որ, վարչապետի խօսքերուն չուզեր անդրադառնալ քանի որ անոնք կը կրեն քաղաքական բնոյթ, իսկ ինք միայն կը պատասխանէ իրաւական հարցերու:

24 ժամ ետք սակայն, Թովմասեան երկար հարցազրոյց տալով ընդդիմադիր լրատուամիջոցներէն մէկուն, փորձեց բացատրել թէ ամէն ինչ կարգին է եւ պէտք է դադարեցնել Սահմանադրական Դատարանի վրայ

### «Հայաստանն ու Եւրոպական Միութիւնը Ներկայիս Գերազանց Յարաբերութիւններ Ունին»։ Դեսպան Սվիթալսքի

Հայաստանի ու Եւրոպական Միութեան յարաբերութիւնները գերազանց են, նման յայտարարութիւն ըրած է Երեւանի մէջ իր քառամեայ դիւանագիտական առաքելութիւնը աւարտող Եւրոպական Միութեան պատուիրակութեան ղեկավար Փիլիթ Սվիթալսքին:

Սվիթալսքին յայտնած է որ, Հայաստանի ու Եւրոմիութեան միջեւ կնքուած Համապարփակ եւ ընդլայնուած գործընկերութեան համաձայնագիրը իրականացման փուլի մէջ է:

«Մենք էականօրէն մեծցուցած ենք Հայաստանի զարգացման համար նախատեսուած նիւթական աջակցութիւնը: Ինչպէս տեղեակ էք, Հայաստանը ստացած է 25 միլիոն եւրօ, այսպէս կոչուած, հովանաւոր ֆոնտի շրջանակէն ներս, եւ այդ ֆոնտը հայեցողական ֆոնտ է, որ նախատեսուած է բացառապէս բարեփոխումներու իրականացման համար: Հայաստանը կրնայ հպարտանալ, որ իր՝ հովանաւոր ֆոնտի չափը աւելի մեծ է, քան Վրաստանի պարագային: Սա նշանակութիւն ունի: Հովանաւոր ֆոնտի չափը կը նշանակէ վերջին շրջանին Հայաստանի իրականա-



Եւրոպական Միութեան պատուիրակութեան ղեկավար Փիլիթ Սվիթալսքի

ցուցած բարեփոխումներու ճանաչում: Մասնաւորապէս, խօսքը անցած տարուան Դեկտեմբերին Հայաստանի մէջ կայացած խորհրդարանական ընտրութիւններու մասին է: Սակայն միայն այդ մասին չէ խօսքը: Եթէ այս ամէնը միասին դիտարկենք, կրնանք ըսել, որ Եւ-

### Հայ-Ամերիկեան Թանգարանի Ի Նպաստ Ճաշկերոյթին Հանգանակուեցաւ 270 Հազար Տոլար



Տեսարան մը Արա եւ Նինա Օհանեաններու տան մէջ տեղի ունեցած ընդունելութենէն

Կիրակի, 21 Յուլիս, 2019 պատմական յիշատակելի օր մը եղաւ Կլենտէյլ քաղաքին մէջ կառուցուելիք Հայ-Ամերիկեան Թանգարանի շինութեան մեծ ծրագրի իրագործումին գծով: Այս առթիւ հանգանակալին շքեղ ընդունելութիւն մը կազմակերպուած էր Արա եւ Նինա Օհանեանի Մալիպուրի բարձունքի գեղատեսիլ ապարանքին մէջ:

Շուրջ 110 հրաւիրեալներուն մէջ կը նշմարուէին Հայ-Ամերիկե-

ան Թանգարանի Խնամակալ Մարմնի համա-ատենապետ եւ Թեմիս առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրախան, նոյն խորհուրդի անդամ Գաբրիէլ Մուրչեան, ինչպէս նաեւ ծանօթ ազգայիններ, բարերարներ եւ հովանաւորներ:

Այս առթիւ գործադրուեցաւ օրուան պատշաճ յայտագիր մը: Հիւրընկալ ամուլին անունով Տիկին Նինա Օհանեան սրտանց բարի

### «Ռազմական Անակնկալներ Պիտի Ունենանք». Դաւիթ Տօնոյեան

Նախիջևեանի հատուածին մէջ Յուլիս 17-ին հայ դիրքապահներու ուղղութեամբ արձակուած կրակոցէն ետք կապ հաստատուած է ատրպէյճանական կողմի հետ: Այս մասին լրագրողներուն տեղեկացուցած է Պաշտպանութեան նախարար Դաւիթ Տօնոյեանը:

Սահմանալին որոշ հատուածներու վրայ, նախարարի գնահատմամբ, առկա է վերահսկելի լարուածութիւն, պատճառը ճարտարապետական աշխատանքներն են. - «Կրակոցը եղել է ոչ նպատակային, ոչ թիրախաւորող: Ամէն դէպքում մենք միջոցներ ենք ձեռնարկել, նաեւ կապ է հաստատուած հարեւանի հետ, որպէսզի չկրկնուեն էդ դէպքերը»:

Նախարարը աւելցուցած է, որ օգտագործուած է 2018-ի Սեպտեմբերին Տուշանպէի մէջ Նիկոլ Փաշինեանի եւ Իլհամ Ալիեւի միջեւ պայմանաւորուածութեան արդիւնքով ստեղծուած կապը. - «Միջնորդաւորուած կապ է սա, բայց խօսում ենք ոչ անմիջապէս, խօսում ենք նշանակուած պաշտօնեաների միջոցով: Նորմալ գործընթաց է սա, շատ դրական գործընթաց է»:

Նախարարը ռազմական անակնկալներ խոստացած է բանակի սպառազինութեան մասով: Բացի այդ, Տօնոյեանը յստակեցուցած է, որ ռուսաստանեան արտադրութեան ՍՈՒ-30 բազմազործարոյթ կործանիչները Հայաստան պիտի հասնին մինչեւ 2020 թուականի սկիզբը:

### ԵԱՀԿ Կոչ Կ'ընէ Թուրքիոյ Բացայայտելու Հրանդ Տիւրքի Սպանութեան Բոլոր Կազմակերպիչները

Եւրոպայի Ապահովութեան եւ Համագործակցութեան Կազմակերպութիւնը (ԵԱՀԿ) կոչ ըրած է թրքական կառավարութեան գտնելու եւ պատասխանատուութեան ենթարկելու բոլոր անոնք, որոնք 2007 թուականին կազմակերպած են «Ակոս» թերթի խմբագիր Հրանդ

**«Մասիս»-ի  
Յաջորդ Թիւը**

«Մասիս»ի Շաբաթօրեայ տարեկան արձակուրդին առիթով մեր յաջորդ թիւը լոյս կը տեսնէ Օգոստոս 24-ին: Ամենօրեայ լուրերուն կրնաք հետեւիլ [MassisPost.com](http://MassisPost.com) կայքէջով:

ՎԱՅԱՍԱՆԵԱՆ ՄԱՍՈՒԼ

Հրայր Թովմասեանը Սառեցրեց Քոչարեանի Գործը

ԱՐԱՍ ԱՄՍՏՈՒՆԻ

Ռոբերտ Քոչարեանի պաշտպանական թիմի ներկայացուցիչները յայտարարել են, որ ՄԻԵԴ-ից եւ Վենետիկի յանձնաժողովից Ռոբերտ Քոչարեանի վերաբերեալ խորհրդատուական կարծիքները կարող են ստացուել մինչեւ 5-6 ամիս ժամանակահատուածում: Խօսքը Սահմանադրական դատարանի դիմումի մասին է, որով այդ կառույցները պահանջում են խորհրդատուական կարծիք երկրորդ նախագահի դատական գործի վերաբերեալ՝ անձեռնմխելի է նա, թէ ոչ:

Ինչպէս յայտնի է, ՄԴ-ն այդ գործը ընդունել էր վարույթ եւ նշանակել նոյնիսկ քննութեան օր՝ Օգոստոսի 20: Գործի քննութեան ընթացակարգ էր ընդունուել գրաւոր տարբերակը: Դրանից յետոյ եղաւ վարչապետ Նիկոլ Փաշինեանի յայտնի հարցազրոյցը, որտեղ նա փաստացի վերահաստատեց Սահմանադրական դատարանի կազմի կամ առնուազն նախագահի փոփոխութեան քաղաքական մտադրութիւնը: Այդ հարցազրոյցին էլ յանկարծ յաջորդեց ՄԴ որոշումը՝ գործն ուղարկել Վենետիկ եւ ՄԻԵԴ՝ փորձաքննութեան եւ խորհրդատուական կարծիքի:

Ռոբերտ Քոչարեանի պաշտպանական թիմի յայտարարութիւնից փաստացի ստացուած է, որ Հրայր Թովմասեանը նրա գործը, այսպէս ասած, «սառեցրել» է 5-6 ամսով՝ ուղարկելով այն հեռավոր խորհրդատուական հետեւից: Այսինքն՝ ստացուած է, որ վարչապետի կողմէ հարցազրոյցից յետոյ թէեւ Հրայր Թովմասեանն, այսպէս ասած, պատասխան հարցազրոյց տուեց՝ ոչ պակաս կոշտ, ընդունելով մարտահրաւէրը, այդուհանդերձ մինչ այդ հարցազրոյց-պա-

տասխանը նա վարչապետի հարցազրոյցից յետոյ կատարեց մի քայլ, որը պարունակում է Ռոբերտ Քոչարեանի գործը մի քանի ամիս սառեցնելու ներուժ:

Մեծ հաշուով ստացուած է, որ Հրայր Թովմասեանն այդ քայլով ժամանակ է շահում գործնականում բոլոր կողմերի համար՝ բացառութեամբ գուցէ միայն երկրորդ նախագահ Քոչարեանի: Նրա պաշտպաններն իհարկէ յայտարարում են, որ գործը այդ ընթացակարգում գտնուելու պարագայում երկրորդ նախագահը պէտք է լինի ազատութեան մէջ, սակայն հազիւ թէ կայ դրա տեսանկի իրականանալիութիւնը, քանի որ, յամենայնդէպ մօտ ապագայում, նրան ազատ արձակելը այլեւս բաւականին ուժգին հարուած կը հասցնի իշխանութեան հեղինակութեանը, որը հենց Քոչարեանի վերաբերեալ դատավճռի առիթով կառուցեց քաղաքական գործողութիւնը դատական համակարգի դէմ, եւ մինչ այդ գործողութեան որեւէ հանգուցալուծում երկրորդ նախագահի ազատ արձակումը կը նշանակի, որ իշխանութեան այդ քաղաքական գործողութիւնը տապալուել է: Ըստ այդմ՝ անկասկած է, որ կառավարող քաղաքական թիմը կ'անի ամէն ինչ, որպէսզի թոյլ չտայ այդ տապալումը

Միւս կողմից՝ Օգոստոսի 20-ին նշանակուած ՄԴ-ում Ռոբերտ Քոչարեանի գործի քննարկումը որոշակի ցայտնոտ կարող էր ստեղծել, որի ուիսկը, սակայն, Հրայր Թովմասեանը փաստօրէն չէզոքացրեց՝ գործը ուղարկելով Վենետիկ: Ժամանակը այս իրավիճակում գործնականում բոլորին է պէտք՝ բացի թերեւս Ռոբերտ Քոչարեանից:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

Աւտոճանապարհ Փակելու Ինստիտուտը Չպէտք է Արժեզրկել

Նախօրէին մի խումբ իշեւանցիների եւօրեայ բողոքի էին. նրանք փակել էին ավտոճանապարհը եւ պահանջում էին թրջատրել ապօրինի ծառահատումներ անելու «տուն պահել»: Համաձայնէ՛ք, որ ամենեւին իրաւաչափ պահանջ չէ գողութեան լեգալացումը, առաւել էլ եւս իրաւական չէ նման հիմնաւորումը փողոց փակելը: Ընդհանրապէս, ճանապարհ փակելը նախայեղափոխական հայաստանում անհրաժեշտութիւն էր, քանի որ քաղաքացու ձայնը իշխանութիւններին հասանելի եւ լսելի չէր, դրա համար ընտրուել էր այդպիսի մարտավարութիւն, որպէսզի քաղաքացիները կարողանան իրենց բողոքի ձայնը տեղ հասցնելու փոխանցել միմեանց:

Հիմա նոր Հայաստանում լսելի դառնալու խնդիր ամենեւին չկայ: Նախ՝ լրատուամիջոցներն են շատ ակտիւ աշխատում, ինչպէս նախկինում, ու իշխանութիւններն էլ հետեւում են լրատուամիջոցներին, ինչպէս նախկինում: Պարզապէս տարբերութիւնն այն է, որ նախկինում այն, ինչ ցանկալի չէր, անտեսուած էր, ինչը անհրաժեշտ էր նկատել, նկատուած էր: Հիմա նկատուած է ամէն ինչ, ու չի կարող մի քաղաքացի դժգոհութիւն յայտնել, եւ դա հասանելի

չդառնայ բարձրագոյն իշխանութեանը:

Իւրաքանչիւրը, սակայն, պէտք է հասկանայ, որ իր հակաիրաւական որեւէ արարք արժանանալու է կոշտ հակահարուածի օրինական դաշտում, եւ մարդկանց բերման ենթարկելն ու կալանաւորելը ավտոճանապարհի փակման համար միանգամայն տեղաւորուած է օրինականութեան, տրամաբանութեան անհրաժեշտութեան տիրոջութեամբ: Պարզապէս պէտք է հետեւել, որ յանկարծ ուժայինների գործողութիւնները չվերածուեն կլանային ինքնապաշտպանութեան: Յիշո՞ւմ էք՝ երեք օր առաջ էլ սեւանցիներն էին փակել ավտոճանապարհը ու կրկին պահանջ էին առաջ քաշում, որը, նախ, իրաւագուրկ էր, քանի որ առողջապահութեան նախարարութեան յայտարարութիւնը չէր վերաբերում ողջ Սեւանայ լճի տարածքին, այլ կոնկրետ հատուածների, բացի այդ, չէր կարող եւս մէկ յայտարարութիւն տուրիստների հոսք ապահովել դէպի Սեւանայ լիճ: Կարճ ասած, ավտոճանապարհ փակելու ինստիտուտը չպէտք է արժեզրկել, այն պէտք է մնայ իրապէս ծայրահեղ քայլ, որին դիմելուց յետոյ կոնկրետ լուծումներ կը հետեւեն:

«ԺՈՂՈՎՈՒՐԴ»

Հայաստանի Ռազմական Անակնկալը. Յատուկ Նշանակութեան Կարողութիւն

ՅԱԿՈԲ ԲԱՂԱԵԱՆ

Պաշտպանութեան նախարար Դաւիթ Տօնոյեանը, խօսելով սպառազինութեան ձեռքբերումների մասին, յայտարարել է, որ կը լինեն ռազմական անակնկալներ: Նախարարը չի բացել մանրամասները, սակայն անակնկալների մասին յայտարարութիւնն արդէն իսկ ուշագրաւ է:

Ընդ որում, ուշագրաւ է ձեւակերպումն ինքնին, քանի որ պարունակում է որոշակի յարաբերականութիւն եւ թողնում առնուազն այնպիսի տողատակի տպաւորութիւն, թէ ռազմական նոր ձեռքբերումները ունենալու են ընթացիկ կիրառութիւն, այսինքն չեն լինելու լոկ զսպող գործօն: Դա իհարկէ յայտարարութեան ձեւակերպման որոշակի յարաբերականութիւնից բխող ենթադրութիւն է, բայց միւս կողմից այդ տրամաբանութիւնը լիովին կարող է համահունչ լինել հայկական կողմի նոր անվտանգային մօտեցումներին, որոնց մասին խօսել է պաշտպանութեան նախարարը:

Խօսքն այն մասին է, որ հայկական զինուժն, ըստ նրա տարբեր յայտարարութիւնների, պաշտպանականից անցում է կատարում յարձակողական ռազմավարութեան եւ պատրաստ է որեւէ լարման դէպքում գործողութիւն սկսել հակառակորդի տարածքում, յատուկ ստորաբաժանումների կիրառմամբ: Դաւիթ Տօնոյեանը ամիսներ առաջ իր հարցազրոյցներից մէկում խօսել էր այդ մասին, նշելով, որ Հայաստանը զարգացնում է յատուկ կարողութեան իր այդ ստորաբաժանումները:

Ռազմական «գործուն» անակնկալի հնարաւորութեան իմաստով հետաքրքիր հարց կարող է լինել եւ այն, թէ որն է լինելու այդ անակնկալի աղբիւրը: Հայաստանի սպառազինութեան հիմնական աղբիւրը Ռուսաստանն է, մի շարք յայտնի պատճառներով: Միաժամանակ, ընդհուպ ապրիլեան քառօրեայից յայտնի է, որ դրան յաջորդել է հայկական զինուժի ռազմա-տեխնիկական կարողութեան համալրում Արեւմուտքից, տեխնոլոգիական միջոցներով, որոնք էապէս բարձրացրել են Հայաստանի առաջնագծի յետախուզական-կանխարգելիչ կարողութիւնը:

Պատերազմն այդ հանգամանքում ունեցել է էական դերակատարում, մի քանի գործօնի պատճառով: Առանցքայինը թերեւս այն է, որ ապրիլեան քառօրեան որպէս ռազմա-քաղաքական իրողութիւն ունէր մի քանի աստիճան, եւ դրանցից մէկում իբրեւ ռեզիտալ անվտանգութեան «պարեկ» Ռուսաստանի միջազգային տապալումն էր Այդ իրավիճակում հայկական զինուժի օպերատիւ կարողունակութեան բարձրացման հարցում Արեւմուտքի աջակցութիւնը էական անհրաժեշտութիւն էր նաեւ Ռուսաստանի համար: Ընդհանրապէս, քառօրեան իր ընդգրկուն շրջանակով դրսեւորեց այն, որ մի շարք գործօնների բերումով Մոսկովայի համար գործնականում բարդ է դառնում կատարել անվտանգութեան «պարեկի» ռեզիտալ դերը, եւ այդ հարցում կայ երկու տարբերակ՝ կամ այդ դերը կատարել թուրքիայի պայմաններով, որոնք գործնականում նշանակելու են

Մոսկովայի աստիճանական դուրսդուրում, կամ կատարել այդ դերն Արեւմուտքի աջակցութեամբ, որտեղ չկայ դուրսմղման պայման, այլ կայ ընդամէնը անվտանգութեան միջազգային համակարգին համարժէք վարքագծի խնդիր: Իսկ այդ խնդրի լուծման հարթակ է Հայաստանը՝ հաշուի առնելով հայրուսական յարաբերութեան առանձնաչափութիւնը:

Պաշտպանութեան նախարարի ազդարարած ռազմական անակնկալը ա՞յդ համատեքստում է, թէ ոչ: Ընդհանուր առմամբ, ռեզիտալ անվտանգութեան համակարգի տրանսֆորմացիան այդ համատեքստում է արդէն տեւական ժամանակ, եւ այն ուժգնացել ու ամրացել է Հայաստանում թաւշեայ յեղափոխութեան արդիւնքում:

Կոնկրետ անակնկալի իմաստով, իհարկէ, մանրամասները յայտնի չեն, սակայն այդ առումով թերեւս արժէ յիշատակել մի հանգամանք, որ մօտ երեք շաբաթ առաջ աշխատանքային այցով Հայաստան էր ժամանել ՆԱՏՕ յատուկ նշանակութեան գործողութիւնների հրամանատարը, որը հանդիպել էր նաեւ Հայաստանի պաշտպանութեան նախարարի հետ: Միաժամանակ յատկանշական է այն, որ Դաւիթ Տօնոյեանը ռազմական անակնկալի մասին ազդարարում է օրերս ԱՄՆ, իսկ յետոյ նաեւ Մեծ Բրիտանիայի դեսպանների հետ հանդիպումների ֆոնին:

«ԼՐԱԳԻՐ»

Մամիա
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕԱԹԵՐԹ՝
ՍՈՅՒԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՅՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՐԵ ԱԶԱՊԱՐԵԱՆ
MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Վաիտ Գրիգորեանի Նամակը Ցնցած է Նիկոլ Փաշինեանին



Նիկոլ Փաշինեանը՝ «Ազատութիւն» ռատիոկայանի հայկական ծառայութեան տնօրէն Գրայր Թամրազեանի հետ

ՀՀ սահմանադրական դատարանը ամենավարկաբեկուած հիմնարկներէն մէկն էր, որովհետեւ 1996 թուականէն սկսեալ ՄԴ-ն վաւերացուցած է բոլոր ընտրակեղծիքները եւ, ըստ հոլթեան, կար վստահութեան ձգնաժամ Սահմանադրական դատարանի նկատմամբ, ուստի, որոշուած էր ունենալ նոր Սահմանադրական դատարան: Նման կարծիք յայտնած է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանը՝ «Ազատութիւն» ռատիոկայանի հայկական ծառայութեան տնօրէն Հրայր Թամրազեանի հետ հարցազրոյցի ժամանակ անդրադառնալով Սահմանադրական դատարանի շուրջ տեղի ունեցող իրադարձութիւններուն:

Ինչպէս կը տեղեկացնէ «Արմէնբրես»-ը, ՀՀ վարչապետը նշած է, որ Սահմանադրական դատարանի դատաւոր Վահէ Գրիգորեանի նամակը գինք ուղղակի ցնցած է, որովհետեւ այդ նամակը կարգաւոր, հասկացած է, որ 2017-ին կեղծոնացած ըլլալով Սերժ Սարգսեանի շուրջ ստեղծուող քաղաքական սքանաւորներուն վրայ, չեն նկատած որ նոյնանման սքանաւոր մը կ'աճի Սահմանադրական դատարանին մէջ:

«2019 թուականի Հայաստանը պէտք է ունենայ 2019 թուականի Սահմանադրական դատարան: Սա է քաղաքական խնդիրը: Որեւէ մէկը չկասկածի, որ այս խնդիրը պէտք է լուծուի», - ընդգծած է Փաշինեանը:

Անոր խօսքով՝ երբ 2015 թուականին կը նախաձեռնէին սահմանադրական փոփոխութիւնները, կ'ըսուէր, որ սա երկրի ամբողջական բարեփոխումն է:

«Մենք պէտք է ունենանք

կառավարութեան, նախագահի, խորհրդարանի նոր հիմնարկ եւ նոր Սահմանադրական դատարան, որովհետեւ սահմանադրական գրութեան հեղինակները, ըստ հոլթեան, պնդում էին, որ նրանք գտել են, թէ ինչպիսին պէտք է լինի Հայաստանում իտէլական Սահմանադրական դատարանը, որը պէտք է համապատասխանի մեր այսօրուայ ընդհանուր կարիքներին», - ըսած է Փաշինեանը՝ աւելցնելով. «Հարց՝ ունենք մենք այսօր այնպիսի Սահմանադրական դատարան, որը կը համապատասխանի այսօրուայ գործող Սահմանադրութեան թեքութիւն: Մենք չունենք այդպիսի Սահմանադրական դատարան», - յայտարարած է վարչապետը:

Փաշինեանը բացատրած է, որ ՀՀ Սահմանադրութեան մէջ նկարագրուած Սահմանադրական դատարանի Հայաստանը չի կրնար ունենալ մինչեւ առնուազն 2030 թուականը: «Մենք ունենք այնպիսի դրոյթ Սահմանադրական դատարանի վերաբերեալ, որ չենք կարող կիրառել մինչեւ 2035 թուականը, որովհետեւ Հրայր Թովմասեանը սեփականաշնորհել է սահմանադրական դատարանը:

Մենք ունենք իրողութիւն՝ 2019 թուականի Հայաստանի թէ՛ Սահմանադրութեան, թէ՛ յեղափոխութեան, թէ՛ ժամանակի իմաստով, բայց, ըստ հոլթեան, ունենք 1995 թուականի Սահմանադրական դատարան: Այս պատկերը ցոյց է տալիս, որ Հրայր Թովմասեանի կողմից սեփականաշնորհուած է Սահմանադրական դատարանը», - եզրափակած է ՀՀ վարչապետը:

Պիւտճի Եկամուտները Աճած են 25%-ով

ՀՀ պետական պիւտճէ հաշուեկրուած հարկային եկամուտները 2019-ի առաջին եռամսեակին նախորդ տարուան նոյն ժամանակահատուածին համեմատ աճած են մօտ 25%-ով:

ՀՀ Պետական եկամուտներու կոմիտէն հրապարակած է ընթացիկ տարուան Յունուար-Յունիսին պետական պիւտճէ հաշուեկրուած հարկային եկամուտներու եւ պետական տուրքի ծաւալները, որ այդ ժամանակահատուածի համար կազմած է 713,3 միլիարդ ՀՀ դրամ՝ 2018-ի 572,9 միլիարդ ՀՀ դրամի փոխարէն:

Առաջին եռամսեակին հաւաքագրուած հարկային եկամուտներու աճը պայմանաւորուած է հիմնական Աւելացուած արժէքի հար-

կի (ԱԱՀ), եկամտային հարկի եւ շահութահարկի գիծով հարկային եկամուտներու աճով: Դիտարկուող ժամանակահատուածին մէջ Աւելացուած արժէքի հարկի (ԱԱՀ) գիծով եկամուտներն աճած են 19%-ով, եկամտային հարկի գիծով՝ 20%-ով, շահութահարկի գիծով եկամուտները՝ 16%-ով:

Ընթացիկ տարուան Յունիսին նախորդ տարուան Յունիսի նկատմամբ պետական պիւտճէ հաշուեկրուած հարկային եկամուտներու ծաւալը աճած է 17%-ով:

2019 թուականի առաջին կիսամեակին նախորդ տարուան առաջին կիսամեակի համեմատ, նուազած են հարկերու եւ ընկերային վճարներու գծով հաշուեկրուած եկամուտները:

Իջեւանի Դէպքերու Գործով Սեղադրանք Առաջադրուած է 13 Անձերու

Իջեւանի մէջ բողոքի ցոյցի ժամանակ տեղի ունեցած անկարգութիւններու, ոստիկանութեան աշխատակիցներու նկատմամբ կիրառուած բռնութեան եւ խուլիկանութեան գործով մեղադրանք առաջադրուած է 13 անձի:

10 անձ կալանաւորուած է, 2-ի նկատմամբ կիրառուած է այլընտրանքային խափանման միջոց գրաւ, մէկի նկատմամբ՝ ստորագրութիւն չհեռանալու մասին:

Յուլիս 17-ին Իջեւանի մէջ քանի մը հարիւր քաղաքացիներ փակած էին Հայաստան - Վրաստան միջպետական մայրուղին՝ բողոքելով ապօրինի անտառահատումներու արգելքի դէմ: Բախումները սկսած էին, երբ ոստիկանները փորձած էին բանալ ճանապարհը:

Իջեւանի մէջ տեղի ունեցած բախման հետեւանքով վնասուածքներ ստացած տասնեակէ աւելի ոստիկաններ դիմած էին հիւանդանոց՝ բուժօգնութեան:

Իջեւանի ժամանած էին Հայաստանի ոստիկանապետ Վալերի Օսիպեանը եւ Ազգային անվտանգ-

գութեան ծառայութեան տնօրէն Արթուր Վանեցեանը:

Վերջինս յայտարարած է, թէ բողոքի ցոյցը ոչ թէ ժողովուրդի բողոքի ձայնն էր, այլ քանի մը անձանց կողմէ կազմակերպուած սադրանք էր:

Կալանաւորուած անձերէն մէկու՝ Վահրամ Սիմոնեանի մայրը կը պնդէ, թէ կալանաւորման որոշումն անօրինական է, իր որդին ցոյցի մասնակից չէ եղած. - «Ինքը անտեղեակ: Գնացել ա շուկայ, առեւտրի: Մեքենան խցանուել ա էնտեղ: Եղել են իմ ամուսինը, իմ երկու տղաները: Նայել են հասարակութեանը, թէ ինչ ա կատարուում այստեղ: Խցանման պատճառով չեն կարողացել արդէն տեղաշարժուել: Ստիպուած սպասել են»:

Փաստաբանը ըսած է, որ ե՛ւ Սիմոնեանը, ե՛ւ անոր հայրն ու եղբայրը բերման ենթարկած են տունէն: Եղբօրը եւս մեղադրանք առաջադրուած է, անոր նկատմամբ կիրառուած է ստորագրութիւն չհեռանալու մասին: Հայրը այս պահին կարգավիճակ չունի:

Խուզարկուած է Քոչարեանը Կալանքէն Ազատ Արձակած Դատաւորի Աշխատասենեակը

Յատուկ Քննչական Օսույու-թիւնը խուզարկութիւն իրականացուցած է առաջին ատենի դատաւոր Դաւիթ Գրիգորեանի աշխատասենեակին մէջ, աշխատասենեակը կնքուած է:

ՅԲԾ խօսնակ Մարինա Օհանջանեանը «Ազատութեան» հետ գրոյցի ժամանակ հաստատած է, որ խուզարկութիւն տեղի ունեցած է ՅԲԾ-ի մօտ քննուող գործի շրջանակէն ներս:

Թէ ի՞նչ քրէական գործի մասին է խօսքը, Օհանջանեանը ըսած է, որ այս պահին չեն կրնար մանրամասնել:

Երեւանի ընդհանուր իրաւասութեան առաջին ատենի դատարանի դատաւոր Դաւիթ Գրիգորեանի Մայիս 18-ին կայացուցած որոշմամբ կալանքէն ազատած էր Մարտ 1-ի գործով մեղադրեալ, նախկին նախագահ Ռոպերթ Քո-

չարեանը, իսկ գործի վարոյթն ալ կասեցնելով՝ ուղարկած էր այն Սահմանադրական դատարան՝ երկրորդ նախագահին մեղազրուող սահմանադրական կարգի տապալման յօդուածի սահմանադրականութիւնը, նաեւ Սահմանադրութեամբ նախագահի անձեռնմխելիութեան հիմնարկի հոլթիւնը որոշելու համար:

Բարձրագոյն Դատական Խորհուրդի (ԲԴԽ) անդամ Գրիգոր Պեքմեզեանը «Ազատութեան» հետ գրոյցի ժամանակ նշած է, որ երէկ մինչեւ դատաւորի աշխատասենեակի խուզարկումը Յատուկ քննչական ծառայութիւնը իրազեկած է ԲԴԽ-ին: Յիշեցնենք, Բարձրագոյն դատական խորհուրդը անկախ մարմին է, որ կ'երաշխաւորէ դատարաններու եւ դատաւորներու անկախութիւնը:

Սահմանադրական Դատարանը Քոչարեանի Գործով Վարոյթը Կասեցուցած է Եւ Ուղարկած Վեցետիկի Յանձնաժողով

Սահմանադրական դատարանը, Յուլիս 18-ին, որոշում կայացուցած է կասեցնել Երեւան քաղաքի ընդհանուր իրաւասութեան դատարանի եւ Ռոպերթ Քոչարեանի դիմումներու հիման վրայ՝ Հայաստանի Հանրապետութեան քրէական օրէնագիրքի 300.1-րդ յօդուածի՝ Սահմանադրութեան համապատասխանութեան հարցը որոշելու վերաբերեալ գործերու վարոյթները:

Սահմանադրական դատարանը որոշում կայացուցած է «Երեւան քաղաքի ընդհանուր իրաւասութեան դատարանի եւ Ռոպերթ Քոչարեանի դիմումներու հիման վրայ՝ Հայաստանի Հանրապետութեան քրէական օրէնագիրքի 300.1-րդ յօդուածի՝ Սահմանադրութեան համապատասխանութեան հարցը որոշելու վերաբերեալ գործերով խորհրդատուական կարծիք ստանալու նպատակով Մարդու իրաւունքներու եւրոպական դատարան-

ին եւ վեցետիկեան յանձնաժողովին դիմելու եւ այդ կապակցութեամբ յիշեալ գործերու վարոյթները՝ մինչեւ պատասխանները ստանալը, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրէնքի 56-րդ յօդուածի առաջին մասի 5-րդ կէտի հիմքով կասեցնելու վերաբերեալ:

Այս կապակցութեամբ, Եւրոպայի խորհուրդի վեցետիկի յանձնաժողովը դեռ չէ ստացած Հայաստանի Սահմանադրական Դատարանի դիմումը, հետեւաբար՝ տուեալ թեմայով մեկնաբանութիւններ ընել չեն կրնար: Այս մասին «Ազատութեան» փոխանցած է Եւրոխորհուրդի խօսնակ Թաթիանա Պաւլանի՝ պատասխան հարցի, թէ ստացած է արդեօք վեցետիկի յանձնաժողովը Հայաստանի երկրորդ նախագահ Ռոպերթ Քոչարեանի գործով Սահմանադրական դատարանի դիմումը:

# ԼՈՒՐԵՐ

## Թրամփը Չի Մտածեր Թուրքիոյ Դեմ Պատժամիջոցներ Կիրառելու Մասին

ԱՄՆ նախագահ Տանըլտ Թրամփը յայտարարած է, որ այս պահին մտադիր չէ Թուրքիոյ դէմ պատժամիջոցներ կիրառել այն բանի համար, որ Թուրքիան զնած է ռուսական S-400 հրթիռային համակարգեր:

«Թուրքիոյ դէմ պատժամիջոցներ կիրառելու ուղղութեամբ չեմ մտածեր: Կը քննարկենք, իրավիճակը կը գնահատենք: Շատ դժուար իրավիճակ մը ստեղծուած է: Պէտք է տեսնենք՝ ինչպէս դուրս կու գանք այս վիճակէն», - նշած է Թրամփը:

ԱՄՆ հանրապետական եւ դեմոկրատական կուսակցութիւններու ծերակուտականները կը շարունակեն նախագահ Տանըլտ Թրամփի վրայ ճնշում գործադրել Թուրքիոյ դէմ պատժամիջոցներ կիրառելու համար: Հանրապետական կուսակցութեան ծերակուտական Ռիք Սքոթը եւ Թոմ Եանկը Սենատ ներկայացուցած են պատժամիջոցներու նոր առաջարկ:

Առաջարկին մէջ նշուած է. «Թուրքիոյ նախագահ Ռեճէպ Թայէպ Էրտողանը երկրին մէջ հաստատած է մենատիրական ռեժիմ,



Նախագահ Տանըլտ Թրամփ

ինչի հետեւանքով կ'ոտնահարուին մարդոց իրաւունքները: Ուստի, օրէնքներու շրջանակներէն ներս, Անգարայի դէմ պէտք է կիրառուին բոլոր անհրաժեշտ պատժամիջոցները»:

Իսկ դեմոկրատական կուսակցութեան ծերակուտական Պոպ Մենենտէսը յայտնած է, որ միայն F35 կործանիչներու ծրագրին Թուրքիան դուրս բերելը բաւարար պատժամիջոց մը չէ:

## Ատրպէյճան Չէ Միացած Կրօնի Ազատութեան Զանաժողովի Յայտարարութեան



Արտաքին գործոց նախարար Ջոհրայ Մնացականեան «Կրօնի ազատութեան նախարարական համաժողովի» ընթացքին

Ատրպէյճանը Հարաւային Կովկասի միակ երկիրն է, որ հրաժարած է ստորագրել Ուաշինկթընի մէջ տեղի ունեցած «Կրօնի ազատութեան նախարարական համաժողովի» եզրափակիչ յայտարարութիւնը:

ԱՄՆ Պետական քարտուղարութեան մօտ տեղի ունեցած եւօրեայ նախարարական հանդիպումներու ժամանակ ելոյթներ ունեցած են Միացեալ Նահանգներու փոխնախագահ Մայք Փենսը, պետական քարտուղար Մայք Փոմփէյժը, 106 երկիրներէ աքթիւիսթներ եւ կրօնական գործիչներ:

Կրօնի հարցերով աշխարհի խոշորագոյն այդ համաժողովին Հայաստանը ներկայացուցած է արտաքին գործոց նախարար Զոհրայ

Մնացականեանը, Ատրպէյճանը՝ երկրի կրօնական կառույցներու հետ աշխատանքի հարցերը կարգաւորող յանձնաժողովի նախագահ Մուպարիզ Ղուրպանլին:

Ատրպէյճանական պատուիրակութիւնը հրաժարած է ստորագրել մասնաւորապէս աստուած անարգութեան եւ ուրացողութեան վերաբերեալ օրէնսդրութեան հետ կապուած յայտարարութիւնը: Հայաստանը եւ վրաստանը միացած են անոր:

Կրօնական ազատութիւններու մասին ամենամեայ գեկոյցներուն մէջ ամերիկեան Պետական քարտուղարութիւնը պարբերաբար կը քննադատէ Ատրպէյճանի իշխանութիւնները հաւատացեալներու ազատութիւնները սահմանափակելու համար:

## Օտարերկրեայ Քաղաքացիները Անշարժ Գոյք կը Գնեն Զայաստանի Մէջ

Հայաստանի անշարժ գոյքի շուկային մէջ աշխոյժութիւն կը նկատուի, աճած են ինչպէս առուվաճառքի գործարքներու քանակը, այնպէս ալ բնակարաններու գիները: Ընդ որում, աւելցած է նաեւ օտարերկրեայ քաղաքա-

ցիներու կողմէ կատարուող առուվաճառքներու թիւը, անշարժ գոյքի գործակալութիւններէն որոշները աճը նկատած են յեղափոխութենէն ետք, ոմանք՝ աւելի վաղ: Արմէնբրեսը այս թեմայով զրուցած է անշարժ գոյքի

## Ֆրանսայի Նախկին Վարչապետը՝ Զայաստանի Պետական Զետաքրքրութիւններու Ֆոնտի Տնօրէններու Խորհուրդի Անդամ

Հայաստանի պետական հետաքրքրութիւններու ֆոնտը (ANIF, ԱՆԻՖ) կը յայտարարէ Ֆրանսայի նախկին վարչապետ Տոմինիք տը Վիլփէն տնօրէններու խորհուրդի անդամ նշանակելու մասին: Որոշումը ուժի մէջ մտած է Յուլիս 23-ին:

«Փոխվարչապետ Տիգրան Աւինեանի նախագահութեամբ գործող ԱՆԻՖ-ի տնօրէնների խորհուրդը նախատեսում է համաշխարհային մակարդակի ներկայացուցչութիւն, եւ այս ծիրից ներս Ֆրանսայի նախկին վարչապետ Տոմինիք տը Վիլփէնի ներգրաւումը սահմանում է մասնակցութեան չափազանց բարձր մակարդակ: 2003 թուականին ՄԱԿ-ի Գլխաւոր ասամպլէայի մէջ ունեցած իր ելոյթով տը Վիլփէնը կոչ է արել համաշխարհային առաջնորդներին առաջիկայ աշխարհաքաղաքական զարգացումներում դրսեւորել զսպուածութեան ու դիւանագիտական մօտեցում եւ ընդմիջտ իր տեղն է զբաղեցրել համաշխարհային քաղաքագիտութեան դասագրքերում», - ըսած է ԱՆԻՖ գործադիր տնօրէն Դաւիթ Փափագեանը՝ աւելցնելով. - «Մեծ պատիւ է ընդունել պարոն տը Վիլփէնին որպէս ԱՆԻՖ-ի գործընկեր եւ Հայաստանի բարեկամ: ԱՆԻՖ-ը յատկապէս շնորհակալ է ՀՀ նախագահ պարոն Արմէն Սարգսեանին՝ պարոն տը Վիլփէնին մեզ ներկայացնելու համար»:

Ֆոնտի հաղորդագրութեան համաձայն՝ Տոմինիք տը Վիլփէնը, իր հերթին, ըսած է. - «ԱՆԻՖ-ի խումբին միանալը սկիզբ է նոր ու



Ֆրանսայի նախկին վարչապետ Տոմինիք տը Վիլփէն

հետաքրքիր ճամբորդութեան մը: Ինչպէս Ֆրանսան, Հայաստանը նոյնպէս վերջերս անցաւ քաղաքական դաշտի էական երիտասարդացման փուլ մը, եւ անոր վկայութիւնն է այն, որ ԱՆԻՖ գործադիր տնօրէն պարոն Փափագեանը 37 տարեկան է, իսկ խորհուրդի նախագահ, փոխվարչապետ պարոն Աւինեանը՝ 30 տարեկան»:

«Հայաստանը ներկայիս Եւրոպայի ամենաարագ ՀՆԱ աճի ընթացք ունեցող երկիրն է 2019-ի առաջին եռամսեակին 7,1 տոկոսով, եւ ԱՆԻՖ-ը մեծ ապագայ եւ միեւնոյն ժամանակ մեծ պատասխանատուութիւն ունի այդ աճին իր ներդրումն ունենալու հարցով: Շնորհակալ եմ ԱՆԻՖ-ի արդիւնաւէտ գործունէութեան մասնակցելու հնարաւորութիւն ընձեռելու համար՝ ի շահ Հայաստանի Հանրապետութեան», - յայտարարած է Ֆրանսայի նախկին վարչապետը:

## «Եթէ Ատրպէյճանի Ձեռքերը Զասանելի Են Մեր Որոշ Քանակի Բնակավայրեր, Ապա Մեզի Զասանելի Են 2 Անգամ Աւելին» Արծրուն Յովհաննիսեան

Եթէ որոշ բնակավայրեր կը գտնուին որոշակի խոցելիութեան գօտիի վրայ, ապա այդ երկկողմանի է, ու եթէ Հայաստանի բնակավայրերու X քանակութեան տեղամաս հասանելի է ատրպէյճանական զէնքի համար, ապա հայկական կողմի համար հասանելի են 2X բնակավայրեր: Այս մասին Յուլիս 23-ին «Օրբելի» կեդրոնին մէջ «Ղարաբաղեան հակամարտութիւն. վերջին միտումներ» թեմայով կազմակերպուած քննարկումներու ժամանակ ըսած է Պաշտպանութեան նախարարութեան խօսնակ Արծրուն Յովհաննիսեանը:

«Եթէ մենք ունենք 28-30 բնակավայր, որ հրաձգային զէնքերով կարելի է խոցել, ապա իրենք ունեն աւելի քան 60 այդպիսի բնակավայր, իսկ եթէ չափենք բնակիչների քանակով, ապա իրենց



Պաշտպանութեան նախարարութեան խօսնակ Արծրուն Յովհաննիսեան

մօտ կան երեք անգամ աւելի բնակիչներ խոցելիութեան գօտում» ըսած է Արծրուն Յովհաննիսեան:

գործակալութիւններու ու պատկան մարմնի ներկայացուցիչներու հետ:

2019-ի երկրորդ եռամսեակին Հանրապետութեան մէջ անշարժ գոյքի նկատմամբ իրականացուած է իրաւունքի պետական գրանցման 46 հազար 798 գործարք, որ առաջին եռամսեակի համեմատ աճած է 24,3%-ով, իսկ 2018 թուականի երկրորդ եռամսեակի համեմատ՝ 17,3%-ով: Ընդ որում, 2019-ի երկրորդ եռամսեակին իրականացուած է անշարժ գոյքի առուվաճառքի 12483 գործարք՝ 2018-ի նոյն ժամանակի

11 190-ի եւ 2017-ի նոյն ժամանակի 8 834-ի համեմատ:

2019-ի երկրորդ եռամսեակին Երեւանի կեդրոնին մէջ բազմաբնակարան շէնքերու բնակարաններու 1 քառ. մ մակերեսի հաշուարկով շուկայական միջին գինը եղած է 595 հազար դրամ՝ նախորդ տարուայ նոյն ժամանակի 517 հազար 400 դրամի համեմատ՝ աճելով շուրջ 15 տոկոսով: Ընդ որում, 2019-ի երկրորդ եռամսեակի ցուցանիշը առաջին եռամսեակի համեմատ եւս աճած է 2,9 տոկոսով:

### Հայոց Բանակը Պետք է Ըլլայ Տարածաշրջանի Ամենագարգացածը



Վարչապետ Նիկոլ Փաշինեանը Պաշտպանութեան նախարար Դաւիթ Տօնոյեանի եւ Զինուած ուժերու գլխաւոր շտապի պետ Արտակ Դաւթեանի ուղեկցութեամբ այցելած է Արմաւիրի մարզի N գորամաս:

Կառավարութեան ղեկավարը նախ ծանօթացած է գորամասին մէջ իրականացուող շինարարական աշխատանքներու ընթացքին, այնուհետեւ հանդիպած զինծառայողներուն: Վարչապետը նշած է, որ այժմ Պաշտպանութեան նախարարութիւնը կը փորձարկէ պետական-մասնաւոր գործընկերութեամբ գորամասերուն մէջ զինուորներու սնունդը նոր կարգով ապահովելու ծրագիրը: «Եկել ենք տեղում տեսնելու, թէ ինչպէս է գործընթացն աշխատում», - ըսած է վարչապետը:

Ողջունելով զինծառայողները՝ Նիկոլ Փաշինեանը նշած է. «Միտքի ենթասպաներ, ձեր կեանքում, թերեւս, սկսում է ամենակարեւոր շրջաններից մէկը, երբ դուք ծառայութեան էք անցնում հայրենիքին: Ես համոզուած եմ՝ ձեր ծնողները, հարազատները ձեզ ծառայութեան ճանապարհելուց առաջ յորդորներ են տուել եւ այդ յորդորներից կարեւորագոյնը, թերեւս, եղել է պատուով ծառայել, լաւ ծառայել հայրենիքին: Ես ուզում եմ, բոլորիդ ուշադրութիւնը հրաւիրել այն փաստի վրայ, որ զինուորական գործը, զինուորական ծառայութիւնը, զինուորական մասնագիտութիւնն ամենագարգացած մասնագիտութիւններից մէկն է: Մենք երբեմն չաճախ զինուորական ծառայութիւնը, բնականաբար, ընկալելով որպէս համազգեստի, կօշիկի, անդի, թեխնիքական, նիւթաթեխնիքական այլ հարցերի ծիրում, որը չափազանց կարեւոր է, սակայն շատ յաճախ չենք նկատում, որ զինուորական գործն ամենագարգացած գործերից մէկն է:


Վարչապետը զինծառայողներու ուշադրութիւնը հրաւիրած է յատկապէս այն փաստի վրայ, որ զինուորի ծառայութեան ժամկէտը ինչ-որ առումով նաեւ ուսումնառութեան ժամկէտ է: «Եւ մեր կառավարութեան կարեւոր առաջնահերթութիւններից մէկն այն է, որ զինուորի ուսումնառութեան այս շրջանը մենք առաւելագոյն արդիւնաւէտ օգտագործենք, որ-

պէսզի զինուորը բանակից գորացրուելիս լինի շատ աւելի բարձր զարգացած մակարդակում, քան եղել է մինչեւ զինուորական ծառայութիւնը», - նշած է գործադիր ղեկավարը:

«Սա ձեզ համար մեծ առիթ է սովորել ինչ է մարտավարութիւնը, ինչ է ռազմավարութիւնը: Ռազմավարական ու մարտավարական մտածողութիւնը միայն զինուորական գործում կիրառուող հմտութիւնն է, որովհետեւ մեր ամբողջ կեանքը, գործունէութիւնն, անկախ նրանից զինուորական է, քաղաքացիական, թէ որեւէ այլ գործ, մեր ամբողջ կեանքը կառուցուած է մարտավարական եւ ռազմավարական որոշումներ կայացնելու հմտութիւններից, իրավիճակը գնահատելու հմտութիւնից, իրավիճակում կողմնորոշուելու հմտութիւնից: Սրանք են այն յենասիւնները, որոնց վրայ կառուցուած է զինուորական գործը», - ըսած է Նիկոլ Փաշինեանը:

Նիկոլ Փաշինեանի խօսքով՝ Հայոց բանակը այն հիմնական տեղն է, ուր Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիներուն կը սորվեցնեն յաղթելու արուեստը, յաղթելու հմտութիւնը: «Համոզուած եմ, որ ձեզանից իւրաքանչիւրի մէջ կայ յաղթողի տաղանդը եւ զինուած ուժերը պէտք է կարողանան օգնել ձեզ, որպէսզի ձեր մէջ այդ տաղանդը բացայայտուի: Եւս մէկ նկատառում. կարծում եմ, որ մենք նաեւ քաղաքական մակարդակում այսպիսի խնդիր պէտք է դնենք մեր առաջ եւ ասենք, այո, Հայաստանի բանակը պէտք է լինի տարածաշրջանի ամենամարտունակ բանակը, բայց այս խնդիրը լուծելու համար ես ճանապարհը տեսնում եմ հետեւեալ կերպ. Հայոց բանակը պէտք է լինի տարածաշրջանի ամենագարգացած բանակը: Որպէսզի սա լինի՝ հայ հանրութիւնը պէտք է լինի տարածաշրջանի ամենագարգացած հանրութիւնը, Հայաստանի Հանրապետութիւնը պէտք է լինի տարածաշրջանի ամենագարգացած պետութիւնը: Եւ մենք պէտք է ամենօրեայ կեանքում կարողանանք ճշգրիտ մարտավարական, ռազմավարական որոշումներ կայացնել, ճշգրիտ գնահատել իրադրութիւնը եւ կայացնել ճշգրիտ ու ժամանակին որոշումները», - նշած է կառավարութեան ղեկավարը:

### Աժ Նախագահը Ուաշինգթոնի Մէջ Հանդիպած է Միջ Մաքրոնելի եւ Նենսի Փելոսիի հետ



Ազգային ժողովի նախագահ Արարատ Միրզոյեանը Ուաշինգթոնի մէջ հանդիպած է ԱՄՆ Սենատի հանրապետական մեծամասնութեան ղեկավար Միթչ Մըք-Քոննելի հետ:

Աժ խօսակը գործընկերող ներկայացուցած է Հայաստանի մէջ տեղի ունեցած յեղափոխութեան յաջողող քաղաքական զարգացումները՝ ընդգծելով այս փուլին ԱՄՆ-ի կողմէ աջակցութեան կարեւորութիւնը: Կողմերը քննարկած են Միացեալ Նահանգներու

ցուցիչներու պալատի խօսնակ Նենսի Փելոսիի հետ: Անոնք քննարկած են հայ-ամերիկեան յարաբերութիւններուն առնչուող հարցեր:

Խորհրդարանի ղեկավարը ներկայացուցած է Հայաստանի մէջ տեղի ունեցող զարգացումները եւ շնորհակալութիւն յայտնած Նենսի Փելոսիին հայ-ամերիկեան յարաբերութիւններուն մէջ տարիներ շարունակ ունեցած աւանդին համար:

Ներկայացուցիչներու պալատի խօսնակը մեծապէս կարեւորած է Հայաստանի մէջ տեղի ունեցած



կողմէ Հայաստանին տրամադրուող նիւթական աջակցութեան մեծացման հնարաւորութիւնները, երկրի արտաքին քաղաքականութեան ու տարածաշրջանային կայունութեան եւ շարք մը այլ ոլորտներուն վերաբերող հարցեր:

Աժ լրատութեան եւ հանրութեան հետ կապերու վարչութեան փոխանցմամբ՝ Միրզոյեանը հանդիպման ընթացքին անդրադարձած է Ազգային ժողովրդավարական եւ Միջազգային հանրապետական հիմնարկներու՝ Հայաստանի Ազգային ժողովի հետ համատեղ ծրագրերու կարեւորութեան, որոնք ուղղուած են խորհրդարանի կարողութիւններու զարգացմանն ու բարեփոխումներու օրակարգին նպաստելուն:

Կողմերը մեծապէս կարեւորած են հայ-ամերիկեան յարաբերութիւններուն մէջ առկայ մեծ ներուժի բացայայտումն ու այդ ուղղութեամբ գործնական քայլերու իրականացումը:

Նոյն օրը, Արարատ Միրզոյեանը հանդիպած է ԱՄՆ Ներկայա-

ժողովրդավարական փոփոխութիւնները: Հանդիպման ընթացքին կողմերը քննարկած են երկուստեք հետաքրքրութիւն ներկայացնող հարցեր:

Աժ նախագահի գլխաւորած պատուիրակութիւնը ԱՄՆ մայրաքաղաքին մէջ մասնակցած է House Democracy Partnership կազմակերպութեան Առաջնորդներու ֆորումի աշխատանքներուն: Միրզոյեանը ելույթ ունեցած է «Օրէնսդիր մարմիններու անկախութեան կարեւորութիւնը բռնապետութեան վտանգի կանխման ծիրէն ներս» թեմայով՝ ներկայացնելով նախորդ տարուան Ապրիլ-Մայիս ամիսներուն տեղի ունեցած թաշեայ յեղափոխութիւնն ու խորհրդարանի օրակարգին մէջ գտնուող բարեփոխումները:

Ելույթով հանդէս եկած է նաեւ Աժ «Լուսաւոր Հայաստան» իմբակցութեան ղեկավար Էստոն Մարուքեանը՝ խօսելով աշխարհի մէջ ժողովրդավարութեան սպառնացող վտանգներու մասին:

### ԵԱՀԿ Կոչ Կ'ընէ Թուրքիոյ

Շարունակուած էջ 1-էն

Տինքի» սպանութիւնը:

Այս կոչը հրապարակուած է Յունիս 19-ին, օր մը առաջ սպա-

նութեան մէջ մեղադրուող եօթը ամբաստանեալներու դէմ դատարանի արձակած երկարատեւ բանտարկութեան վճիռներէն ետք: ԵԱՀԿ ողջունած է դատարանի որոշումը,

սակայն յայտնած է որ աւելին պէտք է ընել յայտնաբերելու համար բոլոր մեղսակիցները:

«12 տարի ետք, Հրանդ Տինքի հարազատները եւ ընկերները արժանի են իմանալու բոլոր ճշմարտութիւնը», - ըսուած է ԵԱՀԿ-ի յայտարարութեան մէջ:

# Հարցազրույց Կլետիա Պերեճիքլեանը Յուսոյ Է՝ Աւստրալիան Սօս Ապագայում կը ճանաչի Հայոց Ցեղասպանութիւնը



Աւստրալիայի Նոր Հարաւային Ուելս նահանգի հայազգի վարչապետ Կլետիա Պերեճիքլեան չորրորդ անգամ է հայաստանում: Այս անգամ այցը մասնաւոր է, սակայն հանդիպումներ են կայացել ՀՀ վարչապետի եւ նախագահի հետ: «Արմենպրես»-ը Կլետիա Պերեճիքլեանի հետ գրուցել է առաջիկայ ծրագրերի, Նոր Հարաւային Ուելս նահանգի հայ համայնքի, Հայոց ցեղասպանութեան ճանաչման եւ այլ թեմաների շուրջ:

- Տիկին Պերեճիքլեան, 2019թ. մարտի 23-ին Նոր Հարաւային Ուելս նահանգում տեղի ունեցած ընտրութիւնների արդիւնքում դարձաք նահանգի հայազգի եւ կին առաջին վարչապետը: Նոր Հարաւային Ուելսն իր մեծութեամբ եւ բնակչութեան թուաքանակով մի քանի անգամ գերազանցում է Հայաստանին, իր տնտեսութեամբ գերազանցում է նաեւ մի շարք առաջատար երկրներին: Համագործակցութեան ի՞նչ պիտի հեռանկարներ տեսնուի Հայաստանի Հանրապետութեան հետ: Փոխգործակցութեան ծրագրեր ունե՞ք, որոնք այս անցի ընթացքում արդէն քննարկել եք Հայաստանի վարչապետի կամ նախագահի հետ:

- Ծրագրերը շատ լայն են, եւ յոյս ունեմ, որ ապագայում կկարողանանք պաշտօնական մակարդակում հզօր կապեր ստեղծել, որովհետեւ ոչ պաշտօնական մակարդակում մեր սրտերը շատ մօտ են: Նոր Հարաւային Ուելս նահանգի հայ համայնքը շատ հզօր է: Հայ համայնքի անդամները միշտ ցանկանում են ոչ միայն այցելել Հայաստան, այլ նաեւ օգտակար լինել երկրին: Պաշտօնական մակարդակում յարաբերութիւնները խորացնելու հարցը շատ լուրջ քննարկե-

ցինք թե՛ վարչապետի, թե՛ նախագահի հետ, եւ յոյս ունեմ, որ ապագայում կկարողանանք մեր յարաբերութիւններին պաշտօնական կարգավիճակ տալ:

- Հայաստան այցելել եք նաեւ 2013թ.-ին՝ ավստրալիական քաղաքական գործիչների պատվիրակութեան կազմում: Այդ այցից 6 տարի է անցել, ի՞նչ փոփոխություններ եք նկատում Հայաստանում եւ ի՞նչ տպավորություններ ունեք այսօր:

- Սա առաջին անգամ է, որ Հայաստան այցելում եմ որպէս վարչապետ, բայց, ընդհանուր առմամբ, չորրորդ այցն է: Այստեղ ազգականներ ունեմ, եւ միշտ փորձում եմ գալ Հայաստան: Հայաստանում շատ փոփոխութիւններ եմ նկատել: Կարծում եմ՝ ժողովուրդն աւելի լաւատես է, ապագայի նկատմամբ աւելի յոյսով է լցուած, շինարարութիւնն է բաւական զարգանում, սակայն որոշ հարցեր կան, որոնք ապագայում պէտք է լուծուեն: Բայց ես լաւատես եմ Հայաստանի հետ կապուած եւ զգում եմ, որ սփիւռքի հայութիւնը միշտ Հայաստանի կողքին կանգնած է:

- Հայաստանում ինչն է ձեզ առաւել գրաւել, եւ Նոր Հարաւային Ուելսի գրօսաշրջիկներին ինչը կարող է գրաւել, որպէսզի նրանք էլ այցելեն Հայաստան:

- Կարծում եմ՝ Հայաստանում կզրաւեն անուշ պատմութիւնը, տեսարժան վայրերը: Հայաստանն աւելի լաւ ձեւով պէտք է մատուցի իր հարստութիւնները, մանաւանդ պատմական արժէքներ կայացնող կոթողները: Օրինակ՝ արեւմտեան աշխարհը, եթէ տեղեկանայ, որ այստեղ գոյութիւն ունեն 4-5-րդ դարերի եկեղեցիներ, նրանց մօտ մեծ հետաքրքրութիւն կառաջանայ:

- Նախորդ անգամ նաեւ Արցախ էի այցելել, այս անգամ այդպիսի այց նախատեսու՞մ եք:

- Դժբախտաբար, ոչ: Այս անգամ այցը շատ կարճ է, միայն մէկ շաբաթով եմ ժամանել ընտանեկան հարցերով, պէտք է մասնակցեմ հարսանեկան արարողութեան: Բայց ապագայում դարձեալ կայցելեմ Արցախ, երկու անգամ եմ այնտեղ եղել, եւ միշտ ընկերներին յորդորում եմ, որ իրենք էլ գնան: Մօտ ապագայում Աւստրալիայից պատգամաւորական այլ խումբ կժամանի, յուսով եմ, որ նրանք կգնան Արցախ:

- Հայարտօրէն նշում եկ, որ 1915թ. Հայոց ցեղասպանութիւնը վերապրած ընտանիքի թոռնուհի եկ, ձեր գործունեութեան ընթացքում բազմիցս Աւստրալիայի իշխանութիւններին կոչ եկ արել ճանաչել Հայոց ցեղասպանութիւնը: Ըստ ձեզ՝ Ավստրալիան երբ կճանաչի Հայոց ցեղասպանութիւնը, ինչ հնարաւորութիւններ կան դրա համար, եւ ինչ քայլեր եկ ձեռնարկում այդ ուղղութեամբ:

- Մեր նահանգն արդեն 20 տարի է՝ ճանաչել է Հայոց ցեղասպանութիւնը, Արցախի անկախութիւնը ճանաչում է: Մենք յուսով ենք, որ Աւստրալիան նոյնպէս կճանաչի, եթէ Գերմանիան եւ որոշ երկրներ կարող են ճանաչել, եւ ես միշտ իմ խորհրդարանական ընկերների մօտ այդ հարցը բարձ-

րացնում եմ: Յուսով եմ, որ մօտ ժամանակներս Աւստրալիան նոյնպէս կճանաչի Հայոց ցեղասպանութիւնը:

- Հայաստանից դուրս բարձր պաշտօնների շատ քիչ թուով հայեր են կարողանում հասնել: Ի՞նչ խորհուրդ կտաք սփիւռքում բնակուող մեր հայրենակիցներին, ովքեր դեռ նոր են պատրաստուում զբաղուել քաղաքականութեամբ:

- Երկու բան է ինձ միշտ օգնել՝ հաւատն ու աշխատասիրութիւնը: Եթէ անընդհատ աշխատես, ամեն ինչ կարող ես անել: Ինձ միշտ հարցնում են, թէ ո՞րն է գաղտնիքը, ասում եմ՝ գաղտնիք չկայ: Գիշեր-ցերեկ պէտք է աշխատես, եւ պէտք է միշտ լաւատես լինես, այդ երկու բաները շատ կարեւոր են:

- Ապագայում աւելի բարձր պաշտօններ զբաղեցնելու ծրագրեր ու նպատակներ ունե՞ք:

- Ոչ, իմ վարչապետի պաշտօնը բաւական է: Սակայն 17 տարի առաջ, երբ խորհրդարանի անդամ դարձայ, բնաւ չէի պատկերացնում, որ մի օր պէտք է վարչապետ լինեմ: Բայց կամաց-կամաց, երբ մէկ հաջողութիւն գրանցում ես, հասկանում ես, որ միւսին եւս կարող ես հասնել: Այդպէս հասալ այս պաշտօնին:

- Շնորհակալ եմ հարցազրույցի համար:

Հարցազրույցը՝  
Նորայր Շողիկեանի

## Սահմանադրական Դատարանը Խարխափումի մէջ

Շարունակուած էջ 1-էն

«ճնշումները»: Թովմասեան սակայն ոչ մէկ ձեւով անդրադարձաւ վարչապետի նշած յստակ կէտերուն:

Գալով Դատարանի վերջին շրջանի գործունեութեան եւ յատկապէս Քոչարեանի դատավարութեան շուրջ ընթացող դարգացումներուն, հոն եւս նկատելի է վճռակամութեան պակաս ու անորոշութիւն:

Սահմանադրական դատարանը նախ ընդունեց Երեւանի ընդհանուր իրաւասութեան դատարանի դիմումը՝ Քոչարեանի անձեռնմխելիութեան հարցով: Ապա որոշեց ետ վերադարձնել գայն: Երբ Դատարանը դարձեալ դիմեց Սահմանադրական Դատարան, այս անգամ արդէն որոշուեցաւ քննել հարցը ու օր նշանակուեցաւ Օգոստոսի 20-ը: Շաբաթ մը ետք,

Դատարանը դիմեց նոր հնարքի մը, յայտարարելով թէ, հարցի քննութիւնը կասեցուած է եւ խորհրդատուական կարծիք ստանալու նպատակով դիմուած է Մարդու Իրաւունքներու Եւրոպական դատարան եւ Վեներական Յանձնաժողովին:

Այս հակասական քայլերը կու գան հաստատելու թէ, Սահմանադրական Դատարանը խարխափումի մէջ է եւ ի վիճակի չէ ներկայ իր կազմով վստահութիւններ չնող գործունեութիւն իրականացնել: Միւս կողմէ, իշխանութիւնը եւս առայժմ չունի այս անել վիճակէն դուրս գալու յստակ ծրագիր: Ամառնային արձակուրդներէն ետք այդ լուծումը կրնայ յայտնուիլ սահմանադրական փոփոխութիւններու եւ կամ նոր սահմանադրութեան տեսքով:

«ՄԱՍԻՍ»



**MARONIAN**  
INSURANCE SERVICES

Since 1975, we have proudly served your health and life insurance needs.

We will continue to stand by your side and secure your **family** and **business** with our full range of insurance policies.

CALL US FOR A PERSONALIZED QUOTE

**(818) 500 9585**

805 E. Broadway, Glendale, CA 91205  
sbmaronian@gmail.com  
CA INSURANCE LICENSE # 0C99815

**MaronianInsurance.com**



HEALTH



LIFE



COMMERCIAL

# «Եթէ Մենք Կորսնցնենք Սեւանը, Այն Ատեն Կրնանք Հայաստանի Կրայ ալ Խաչ Քաշել»

## Հարցազրոյց՝ Հայկական Բնապահպանական ճակատի Անդամ, Աշխարհագրագետ Լեւոն Գալստեանի Հետ



- Սեւանայ լիճը կրկին «ծաղկած է», բնապահպանները լուսանկարներ կը հրապարակեն: Ի՞նչ կը կատարուի իրականութեան մէջ, ինչքանով է այդ մտահոգիչ:

- Լիճին մէջ կապտականաչ ջրի մոլորակներու մեծ քանակի ած կայ, բայց պէտք է հասկնալ, թէ ինչն է այդ խնդիրին պատճառը: Ինչքան ես գիտեմ, որ եւէ պետական մարմին այսպիսի ուսում նասիրութիւն չէ ըրած վերջին տարիներուն: Բացի այն պատճառներէն, որ ջերմութիւնը բարձր է, կոյուղաջուր կը լեցուի Սեւան, այլ պատճառներ չեն լիշատակուի: Կրնայ սա այսպիսի աստիճանի հասնի, որ անփոփոխելի դառնայ, լիճի ինքնամաքման ընթացքը նահանջէ եւ դադորի: Սա կրնայ լուրջ խնդիրներու հասցնել եւ երկրի բնապահպանական իրավիճակին վրայ մեծ բացասական ազդեցութիւն ունենալ: Երբ մենք կ'ըսենք, որ բնապահպանական անվտանգութիւնը իր կարեւորութեամբ Հայաստանի համար հաւասար է ռազմական անվտանգութեան, շատերը չեն ուզեր հաւատալ: Սեւանայ լիճը բնապահպանական անվտանգութեան կարեւոր բաղադրիչներէն է, եթէ մենք կորսնցնենք Սեւանը, Հայաստանի վրայ ալ կրնանք խաչ քաշել:

Խնդիրն այն է, որ առաջնային կարեւոր հետազոտութիւն չէ կատարուած եւ հիմա ալ չի կատարուիր, թէ եղածին պատճառները որոնք են, ինչ վիճակի է հիմա, ինչ միտումներ կան, ինչ հետեւանքներու կրնայ հասնիլ, ինչ ձեւ պէտք է ըլլայ ջուրի որակի փոփոխութիւնները եւ ինչ անմիջական քայլեր պէտք են այս խնդիրը լուծելու համար: Ոչ թէ պէտք է ըսել՝ մէկ

տարի, 6 ամիս յետոյ կը փոխենք օրէնքը, մաքրման կայաններ կը դնենք: Այդպիսի բաներ կրնայիք ընել այն ժամանակ, երբ հիւանդը լուրջ վիճակի չէ հասած, մահամերձ չէ: Իսկ երբ մահամերձ է, այդ ժամանակ պէտք է վիրաբուժական մօտեցում ցոյց տալ, գործադրել արագ միջոցառումներ, բան մը, որ մենք ցարդ չենք տեսներ:

Մենք, որպէս Հայկական Բնապահպանական ճակատ եւ ես որպէս աշխարհագրագետ, մօտաւորապէս 15 յօդուած հրատարակած ենք Սեւանի մասին (2015 թուականէն սկսեալ), եւ յստակ լիշատակած ենք, որ այսպէս շարունակուելու պարագային, մենք կը կորսնցնենք Սեւանը: Կը լիշատակուի, որ այս վիճակին պատճառը կոյուղաջուրներն են, բայց կոյուղաջուրները 10-15 տարի առաջ ալ կը լեցուէին Սեւանի մէջ, բայց այդ ժամանակ վիճակը չէր:

- Ստեղծուած վիճակին գլխաւոր պատճառը ի՞նչն է:

- Իմ կարծիքով, գլխաւոր պատճառը այն է, որ նախորդ կառավարութիւնը յանցագործութիւն կատարած է Սեւանի նկատմամբ. 2011 թուականէն դադրեցուած է Սեւանայ լիճին մակարդակի բարձրացումը: 2012-2018 թուականներուն Սեւանի մակարդակը բարձրացած է միայն 30 սանթիմետրով, այն պարագային, երբ մինչեւ այդ՝ 2002-2011 թուականներուն, Սեւանի մակարդակը բարձրացած էր 3,5 մետրով: 2002-2011 թուականներուն, ջուրի մակարդակի այսպիսի բարձրացման արդիւնքով, ջուրի որակը սկսած էր բարելաւուիլ: Իսկ 2011 թուականէն յետոյ եղած են տարիներ, որ նոյնիսկ նուազած է ջուրին մակարդակը, բան մը, որ օրէնքով ալ ընդունելի չէ: Ատոր հետեւանքով լիճը սկսաւ կրկին իր որակը կորսնցնել: Սա յստակ նախորդ իշխանութիւններուն գործած յանցագործութիւնն է Սեւանի նկատմամբ:

Երկրորդ պատճառը այն է, որ նոյն յանցագործները, մասնաւորապէս բնապահպանութեան նախարարութեան աշխատողները, չեն մաքրած փամբերձ տարածքները ջուրի մակարդակը բարձրանալէն առաջ: Այդ իսկ պատճառով, ծառեր, օրկանական այլ բաներ մնացած են ջուրին տակ, եւ աւելցած է օրկանական նիւթերու մուտքը լիճ: Վերջին տարիներուն, քանի որ

### Հայաստանն ու Եւրոպական Միութիւնը

Շարունակուած էջ 1-էն

րոպական Միութեան ու Հայաստանի միջեւ համագործակցութիւնը ճիշդ ուղիի վրայ է», - ընդգծած է Եւրոմիութեան պատուիրակութեան ղեկավարը:

Փոթթր Սվիթալաքին յայտարարած է՝ Պրիւքսէլը պատրաստակամ է աջակցելու հայաստանեան դատական բարեփոխումներուն, սակայն ամենեւին մտադիր չէ Երեւանին պարտադրել իր օրակարգը կամ թէ ինչ եղանակով բարեփոխումներ իրականացնել դատական համակարգի մէջ:

Դեսպանը ընդգծած է՝ Պրիւք-

սէլը պատրաստակամ է նշանակալից նիւթական աջակցութիւն ցուցաբերել դատական բարեփոխումներու գործին՝ անյապաղ աջակցութիւն, որ պատրաստ կ'ըլլայ արդէն այս աշնան, եւ բազմամիլիոնն աջակցութիւն՝ գալիք 3-4 տարիներու համար:

Ըստ Սվիթալաքիի, եթէ նախորդ տարիներուն Եւրոմիութիւնը՝ միայն երկկողմ ծրագիրներու միջոցով Հայաստանին կը ցուցաբերէր տարեկան միջինը 35 միլիոն եւրոյի աջակցութիւն, ապա այս տարի այդ թիւը կրկնապատկուած է ու դարձած 70 միլիոն եւրո:




նուազած է Սեւանայ լիճի ձուկերու եւ խեցգետիններու քանակը, որոնք կ'ուտէին այդ օրկանական նիւթերու մէկ մասը, իրավիճակը դարձուց տագնապալի:

- Սեւանը փրկելու համար, որո՞նք պիտի ըլլան առաջնային քայլերը:

- Կը կարծեմ, թէ պէտք է անմիջապէս մաքրել փամբերձ տարածքները եւ նորէն արագ ձեւերով բարձրացնել լիճին մակարդակը, որ կարենանք վերադառնալ գոնէ այն վիճակին, որ եղած է 2011-2012 թուականներուն: Հիմա բնապահպանութեան նախարարութիւնը կը յայտարարէ, որ արտոտ ջուրը կը լեցուի Սեւան եւ պէտք է մաքրման կայաններ տեղադրել եւ այլն: Ի հարկէ, սա ալ պէտք է ընել, բայց մինչեւ գնահատական չունենաս, թէ ինչ է իրական պատճառը եւ ինչն է առաջնահերթ, որ պէտք է կատարուի,

«Արեւիկ» գրատան պատասխանատու Սոնա Գալստեան ողջունեց ներկաները, ներկայացուց Դոկտ. Եւալեանին, հրաւիրելով շնորհանդէսին իրենց սրտի խօսքը ըսելու, Դոկտ. Նազարէթ Պէրպէրեանը, Պրն. Միհրան Գիւրտօղլեանը, Պրն. Զաւէն Գրիգորեանը, որմէ վերջ Պրն. Եւալեան իր սրտի խօսքը արտասանեց, շնորհակալութիւն յայտնելով այս բացառիկ հաւաքոյթին համար: Որմէ ետք Եգնիկ Արք. Պետրոսեանը եւ Սրբազան Հայրը իրենց սրտի խօսքը եւ տպաւորութիւնները արտայայտեցին:

Երեկոն ճոխացաւ Ռոզինա Մարտիրոսեանի «սանթուրի» վրայ կախարդական նուագով, ձկուն մատ-



© Vicken V Cholakian

ներու զարկով՝ «Մախմուր աղջիկ», «Ով սիրուն, սիրուն» եւ Բուժաներէն երգ մը: Երգահան՝ Երաժիշտ՝ արուեստագէտ Հայկ Եւալեանի ղապէլով հայու սրտի զարկերուն եւ արցունքներ խլելով «ուտ»ի վրայ նուագեց «Եարը մարդու եարա կուտայ», «Հօջ, նազան իմ եարը», «Բինկէօլ»՝ (որ...երբ բաց եղան գարնան կանաչ դռները, քնար դարան աղբիւրները Բինկէօլի) եւ երկու արաբական երգեր, որուն կ'ընկերանար իրեն «Քանոնով» յոյն արուեստագէտ Թասօ Բուլիոսը:

Դոկտ. Նազարէթ Պէրպէրեան, ըսաւ թէ սրտի եւ մտքի երկար կապ, մտերմութիւն ունի Դոկտ. Եւալեանի հետ, որպէս խմբագիր եւ աշխատակից: Պրն. Պէրպէրեան փորձեց գիրքին լեզուական բովանդակութեան, գրական շունչին ոճը սահմանել, թէ ո՞ր գրական դասակարգի կը պատկանի: Գլխաւոր արժանիքը Եւալեանի, արագ, կարճ եւ խիտ տարագումով աշխարհ մը, կերպար մը ներկայացնելու մէջ է:

Պրն. Պէրպէրեան կը հաստատէ հեղինակին Աստուածաշնչական ոգին ներկայութիւնը բոլոր յօդուածներուն մէջ: Դոկտ. Եւալեան երբ կը հանդիպի հայ էակի, մարդ էակի մը, կը տեսնէ որ հայ էակը ինչպէս այդ անտանեւի միջավայրին մէջ կրցած է մարդ մնալ, հայ մնալ. Ինք ալ մարդկօրէն՝ հայօրէն կը մօտենայ: Կարծեմ այսպիսի գիրք չենք ունեցած, որ այսքան

ընթերցողը գրաւէ:

Պրն. Միհրան Գիւրտօղլեան, երբ գիրքին ծաւային նայեցաւ (550 էջ) գրախօսական մը գրելու համար վախցաւ, բայց ի վերջոյ կարդաց: Ամէն մէկ յօդուած մամուլի մէջ հրատարակուած յօդուած մըն է: Պրն. Եւալեան ամէն ճամբորդութենէ նորութիւն մը կը յայտնաբերէ, նոր հայեր, նոր մարդիկ քով քովի կը բերէ: Ան հարստացուցած է հայ մամուլը, հայ բեկորներու մասին գրելով, անծանօթ քաղաքներ կը յայտնաբերէ, փնտռելով եւ գտնելով հայու բեկոր մը, կարծես մէկը կը պարտադրէ իրեն: Իր բոլոր ճամբորդութիւններուն, հանդիպումներուն ընդմէջէն կը կերտէ հայը, հայութիւնը, հայրենիքի եւ հողին ուժը: Տեղ մը կ'ըսէ՝ հայուն ամբողջական մշակոյթը՝ հայուն ազգային ինքնութիւնն է, լեզուն եւ պատմութիւնը, երգն է:

Դոկտ. Եւալեան կը տեսնէ հայուն վերապրումը (էջ 296)ին մէջ, ըսելով թէ այսպիսի մարդիկ ցեղասպանութենէն վերջ դարձան մեր հերոսները, հայուն ապրելու հպարտութիւնը դրին մեր հոգիներուն մէջ: Պայքար կար, հայուն շարունակականութիւնը այդ պայքարին աշխատանքին մէջն է:

Պրն. Գիւրտօղլեան վերլուծեց յօդուածներուն ոճին պարզութիւնը, դիւրին ըմբնելիութիւնը, հասկացողութիւնը եւ մասնաւորեց ընթերցողին մէջ քրքրած զգացումը

եւ իր հոգիին մէջ ստեղծած տաղնապը յօդուածին պարունակած նիւթին պատմութեամբ:

Պրն. Զաւէն Գրիգորեան ըսաւ. Հայ գիրքը հայ ժողովուրդի կենաց շունչն է հայ անհատին համար: Հայ գիրքը տրոփող կենդանի սիրտն է հայոց պատմութեան եւ այսօր մեր ձեռքերուն մէջ եղող՝ Հրայր Եւալեանի հրատարակած «Սփիւռքահայ կեանքեր ինչպէս որ տեսայ» գիրքը, մեր ժամանակակից սփիւռքահայ կեանքի պատմութենէն էջեր եւ պատկերներ են, որոնք կը տողանցեն իրենց զանազանութեամբ եւ գունաւոր խճանկարային պատմութիւններով:

Գիրքը կը բովանդակէ սփիւռքահայ ամէնօրեայ կեանքի պատմութիւններ, իրենց կենցաղով, իրենց հասարակաց ազգային գոյութեան եւ գոյատեւման մտահոգութիւններով, անդոհանքով, մշակաւանջով:

Հրայր Եւալեան կը շրջի սփիւռքահայ գաղութներ, Աւետարանի ճամբով Աւետարանի փրկութեան գիրքը ձեռքին եւ հաղորդակից կը դառնայ այդ գաղութներու կեանքերուն, ազգային հայրենասիրական, եկեղեցասիրական գործունէութիւններուն:

Գերաշնորհ Եգնիկ Արք. Պետրոսեան, որպէս մտերիմ բարեկամը եւ գործակիցը Պրն. Եւալեանի, շնորհաւորեց զինք մագիթելով նորանոր Աստուածաշնչական հրատարակութիւններով հարստացնել մեր գրադարանները:

Գերաշնորհ Գեղամ Արք. Խաչերեան, բոլոր ներկաներուն թարգմանը ըլլալով շնորհաւորեց Պրն. Եւալեանին, յանձնարարելով կարգալայն քրիստոնէական եւ հայրենասիրական շունչով գրուած գիրքը:

Սրբազան Հայրը շեշտեց ըսելով հայը կը տոկայ ամէն դժուարութիւններու հայապահմանումի սիրոյն, յանձն առնելով ամէն տեսակ դժուարութիւն:

Դոկտ. Եւալեան խօսք առնելով իր սրտագին շնորհակալութիւնները յայտնեց իրեն շնորհուած այս բացառիկ ազգային հայրենասիրական եւ քրիստոնէական հաւաքոյթ-եղոյթին առթիւ:

Վեր. Վիգէն Չոլաքեան, շնորհաւորեց Դոկտ. Եւալեանին եւ շնորհակալութիւն յայտնեց բոլոր ներկաներուն եւ բոլոր անոնց, որոնք մաս առին շնորհանդէսի յաջողութեան համար:

# INNOVATIVE

## Designs Manufacturing, Inc.

[idmifurnishings.com](http://idmifurnishings.com)

### Պատմաբան Դոնալդ Տուսկի Նուէրը «Փոփոխութիւնների Թատրոնին»



Դեռեւս քերքը կը լիչեն, որ 12 տարի առաջ՝ 2007-ին, Երեւանում մի խումբ խանդավառ երիտասարդներ հիմնեցին ինտերակտիվ թատրոն-տեսակը եւ կոչեցին «Փոփոխութիւնների Թատրոն»:

Ինչ ասել է «ինտերակտիվ թատրոն»: Սա թերեւս ժամանակակից թատրոնի տեսակներից է, երբ բեմահարթակ-հանդիսատես բաժանարար գիծը վերացուած է: Ներկայացումն ընթանում է համագործակցաբար՝ դերասան-հանդիսատես փոխներգործութեամբ:

Ներկայացման ընթացքն ինքնատիպ է. ամբողջական դիտումին յաջորդում է ինտերակտիվ փուլը: Ներկայացման որեւէ հանգուցային դրուագ հանդիսատեսը փոխում է իր հիմնաւորմամբ եւ ինքն էլ յանպատրաստից խաղում բեմի վրայ: Խաղին յաջորդում է աշխոյժ քննարկումը՝ լաւի, վատի բացատրումը: Կարճ ասած՝ «Փոփոխութիւնների Թատրոնը» դառնում է թումանեանական «Վերնատուն» լիչեցնող վերլուծական կենտրոն:

Պատահական չէ, որ «Փոփոխութիւնների Թատրոնի» հիմնադիր եւ ռեժիսոր Հայկ Սեկոյեանը բեւեռուել է «Փոփոխութիւններ» հասկացութեան վրայ: Պարզում է, որ աշխարհում գործում է «քաղաքացիական կրթութեան բարելաւում ինտերակտիվ թատրոնի միջոցով» ծրագիրը: Դառնալով այդ ծրագիրն իրականացող հաստատանեան առաջնակը՝ «փոփոխականները» բեմադրում եւ Հայաստանի, Արցախի հանրութեանն են ներկայացնում ոչ մեծ ծաւալի ինտերակտիվ ուսուցողական ներկայացումներ:

Ներկայացումների խորքում մեր իրականութեան մէջ յաճախ պատահող անկրթութեանն ու բարբարոսութեանը դիմակայելն է:

2019-ի Յուլիսի 20-ին եւ 21-ին Երեւանի «Արտ Կաֆէ» արուեստանոցում «փոփոխութիւնների Թատրոնը» ներկայացրեց Հայկ Սեկոյեանի «ժողով Ազգաւաճորի գիւղապետարանում» գիւղական թեմայով զուարճալի ներկայացումը:

Նազիկի եւ Սէթոյի տունը կուր էր ընկել: Երկուսն էլ Ազգաւաճորի ցորենի արտի ազուաւ քողներն էին: Մականուները. խրտուկի լակ Նազիկ (Աննա Զաքարեան), խրտուկի լակ Սէթօ (Վահագն Գասպարեան): Նազիկը ձգտում էր մարդ դառնալ, քաղաք գնալ, կրթութիւն

ստանալ, որ Ազգաւաճորում բիզնես՝ անասնաֆերմայ բացի: Սէթօն դէմ էր, շատ էր աւանդապաշտ: Ըստ նրա՝ Նազիկի բանագործը տան պատերի ներսում էր եւ՝ դաշտում ազուաւ քելը: Գիւղի գործատէրը (Վազգէն Մատինեան) նոյնպէս դէմ էր՝ մի աշխատող էլ կը կորցնէր: Գիւղապետն (Գէորգ Աբգարեան) էլ էր դէմ՝ գոնէ փոխարինող գտնէր:

Բոլորն էլ փոփոխութիւնների էին կարօտ՝ ֆերման գիւղի փրկութիւնն էր, սակայն...

Օգնութեան եկան հանդիսատեսները: Իւրաքանչիւրն իրեն բնորոշ յուզականութեամբ, գուցէ ենթադրաբար զգում էր, որ կրթութիւնը միշտ է օգտակար, բայց չէին կարողանում կամ քի գործութեամբ հիմնաւորել: Իսկ այդ կամքը դէպի բարեկեցութիւնն տանող փոփոխութեան ուսկային շարժիչն է, առանց որի կեանքը չի բարելաւում:

Ներկայացումից յետոյ գրուցեցինք սցենարի հեղինակ եւ ռեժիսոր Հայկ Սեկոյեանի հետ:

-Դերասանական կազմը մնալու է, թէ տուեալ ներկայացման համար հաւաքագրուած դերասանների խումբ է:

-Դերասանական կորիզը մնալու է, սակայն մեզ հետ համագործակցում են երիտասարդ դերասաններ այլ թատրոններից, նորաւարտներ:

-Դերասանները գիտե՞ն, թէ ինչու է թատրոնը կոչուած «փոփոխութիւնների Թատրոն»:

- Գիտեն, եւ լաւ գիտեն, որովհետեւ փոփոխութիւնը շարժում է, շարժումը՝ պայքար: Իսկ պայքարը երջանկութիւններով ու դժբախտութիւններով լի կեանքն է: Կեանքից էլ փախուստ չկայ:

- Փորձե՞լ էք չափել ներկայացմանը մասնակից հանդիսատես-դերասանի քաղաքացիական կրթութեան նիշը:

- Ներկայացումից յետոյ հանդիսատեսը տուն է գնում բեմի վրայ իր իսկ խաղացած դերն, արտայայտած սեփական միտքը վերլուծելու մտադրութեամբ:

- Մի հարց էլ քաղաքական թոհոբոհից. թաւշեայ յեղափոխութիւնն անցաւ արագ ու անարիւն: Տնտեսական յեղափոխութիւնը ծանր ու դանդաղ է ընթանում: Ոմանք չզգալով իրենց մաշկի

### Գանձայի Մէջ Մեծ Շուքով Նշուեցաւ Տէրեանական Օրը



Սոյն թուականի Յուլիս 21-ին, Վահան Տէրեանի հայրենական գիւղին՝ Գանձայի մէջ, մեծ շուքով նշուեցաւ Տէրեանական օրը: Այս մասին կը հաղորդէ Akhalksxa.net-ը:

Օրհնութեամբ Մամջիկ-Չաւախքի եւ Ծալկայի Ընդհանուր Առաջնորդական Փոխանորդ Հոգեւոր Տէր Մաղաքեայ Վարդապետ Ամիրեանի եւ Ախալցխայի եւ Բորժոմիի շրջաններու Հոգեւոր Տեսուչ՝ Հոգեւոր Տէր Յակոբ արեղայ Սահակեանի, տօնակատարութեան ուխտաւորաբար մասնակցելու զացած էին նաեւ Ախալցխայի Հոգեւոր

Տեսուչեան, Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ հաւատացեալ հայորդիները՝ ուղեկցութեամբ Ախալցխայի յարակից շրջաններու հոգեւոր հովիւ՝ Արժանապատիւ Տէր Թորգոմ Քահանայ Վարդանեանի:

Ուխտաւորները հաղորդակից եղան Սուրբ եւ Անմահ Պատարագին եւ ներկայ գտնուեցան տօնական ձեռնարկին:

Աւարտին, Ախալցխայէն ժամանած ուխտաւորները եւ ներկաները մասնակցեցան հիւրասիրութեան եւ շնորհաւորեցին իրարու մեծն բանաստեղծի լիշատակի օրուան առիթով:

### Կարծախ Գիւղին Մէջ Զիւանիի Օրը Նշուեցաւ



Մամջիկ-Չաւախքի Կարծախ գիւղին մէջ, Յուլիս 20-ին, նշուեցաւ Զիւանիի օրը, որուն իրենց մասնակցութիւնը բերին Վրաստանի մէջ ՀՀ դեսպան Ռուբէն Սաղոյեանը եւ դեսպանութեան դիւանագէտները: Այս մասին կը հաղորդէ Akhalksxa.net-ը:

Տօնական օրը սկսաւ Կարծախ գիւղի Սուրբ Յովհաննու Կարապետ եկեղեցւոյ մէջ՝ Սուրբ պատարագով, որմէ ետք ներկաները ծաղիկներ

խոնարհեցին Զիւանիի արձանին առջեւ եւ շրջայց կատարեցին աշուղ Զիւանիի տուն-թանգարանին մէջ:

Համերգային ձեռնարկին ելոյթներ ունեցան ՀՀ Հանրային ռատիոյ «Սայաթ Նովա» անսամպլը, Ախալքալաքի Մշակոյթի տան «Զիւանի» անսամպլը եւ այլք:

Դեսպան Սաղոյեանը աշուղ Զիւանիի տուն-թանգարանին նուիրեց վերահայ յայտնի նկարիչ Թեոկիզ Միկոյեանցի նկարը:

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ**  
 ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԸՈԳԻ ԸԱՄԱՐ)  
**ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՄԱՐ**  
 1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104  
 (626) 797-7680

# Սինկափուրեան Խոլորձը, Գլխաւոր Թերթն ու Յայերը



## ԱՆՈՒՇ ԹՐՈՒԱՆՏ

Սինկափուրի հայկական փողոցի նորաբաց այգիին մէջ «Վանտա Միսս Ճոակիմ» խոլորձի արձանին բացման հանդիսաւոր արարողութեան մասնակցած է Հայաստանի պաշտօնական պատուիրակութիւնը՝ վարչապետ Նիկոլ Փաշինեանի գլխաւորութեամբ: Այս արարողութիւնը առիթ դարձած է, որպէսզի անցնող օրերուն, Սինկափուրի եւ Հայաստանի մէջ անգամ մը եւս յիշուի, որ Սինկափուրի ազգային խորհրդանիշ այդ ծաղիկը իր անուանումը ստացած է ի պատիւ Սինկափուրի մէջ բնակած հայազգի ծաղկաբոյժ, գիտնական Ակնէս Ճոակիմին (Աշխէն Յովակիմեան), որ այս ծաղիկը խաչասերած եւ ստացած է իր երիտասարդութեան տարիներուն:

Ո՞վ էր Աշխէն Յովակիմեան, որուն Սինկափուրի եկեղեցւոյ բակին մէջ գտնուող տապանաքարին վրայ յաճախ կը դրուի իր անեցուցած թարմ խոլորձը:

Աշխէնի կենսագրութիւնը Սինկափուրի հայերուն պատմութեան կարեւոր մէկ մասը կը կազմէ եւ առանց Ակնէս Ճոակիմի կեանքին անդրադառնալու, թերի պիտի

կարծակի մահէն ետք, անցած են ամբողջ ընտանիքին:

Մայրը՝ Ուրեղիան, զբաղած է այգեգործութեամբ: Ակնէսի մօր հայրը՝ Եսայի Չաքարեան, եղած է Սինկափուրի Առեւտրային պալատի առաջին անդամներէն, ինչպէս նաեւ տեղւոյն հայ համայնքի ղեկավարը:

Ակնէսը եւ իր մայրը կը հետաքրքրուէին այգեգործութեամբ, մայրը նոյնպէս դեր ունեցած է համայնքային կեանքին մէջ: Անոնք խոլորձներ կ'աճեցնէին իրենց ընտանեկան կալուածի այգիին մէջ: Ծաղիկներու եւ այգեգործութեան այդ սէրը առիթ կը դառնայ, որ ամէն տարի մասնակցին ծաղիկի ցուցահանդէսներու, որոնց ընթացքին Ակնէսը հաւաքած էր պարգեւներու տպաւորիչ հաւաքածոյ մը:

1893-1895 թուականներուն սինկափուրեան տարեկան երեք ցուցահանդէսներուն, ան ընդհանուր առմամբ նուաճած է քսանեօթ առաջին եւ տասնհինգ երկրորդ մրցանակ: Ակնէս փառքի հասած է 1899 թուականին, երբ ծաղիկի հերթական ցուցահանդէսի ընթացքին ներկայացուցած է խառնածին ձեւով անեցուցած իր խոլորձը, որ յետագային ստացած է ստեղծողին անու-



ըլլար հայ-սինկափուրեան պատմական ու ներկայ կապերը:

Աշխէն Յովակիմեան հայկական եւ Ակնէս Ճոակիմ օտար անուն-մականունով այս հայուհին ծնած է Սինկափուր, 7 ապրիլ 1854 թուականին, Բարսեղ եւ Ուրեղիա Յովակիմեաններու հարուստ ընտանիքին մէջ: Յովակիմեանները, օտար միջավայրի մէջ ապրելու պատճառաւ, իրենց մականունը փոխած են Ճոակիմի եւ այդպէս ճանչցուած տեղացիներուն մօտ: Անոնք ունէին տասնմէկ երեխայ. Աշխէն-Ակնէսը դուստրերէն աւագն էր եւ ընտանիքի երկրորդ երեխան: Հայրը՝ Բարսեղը, Սինկափուրի մէջ առեւտրային գործակալ էր. զբաղած է բարերարութեամբ, ունեցած է զգալի սեփականութիւն եւ ներդրումներ, որոնք, 1872 թուականին իր յան-

նը՝ «Միսս Ճոակիմ Վանտա»:

Ծաղիկը այնքան սիրուած եւ տարածուած է Սինկափուրի մէջ, որ 1947 թուականին դարձած է երկրի Յաւազդիմական կուսակցութեան խորհրդանիշը, իսկ 1981 թուականին հռչակուած է ազգային ծաղիկ՝ դառնալով Սինկափուրի խորհրդանիշը:

1899 թուականին, պարգեւատրման արարողութեանէն երեք ամիս անց, քաղցկեղէ տառապող Ակնէս մահացած է: Ան նախ թաղուած է Սինկափուրի Bukit Timah գերեզմանոցին մէջ, իսկ 20-րդ դարու կէսերուն անոր տապանաքարը թաղման վայրէն տեղափոխուած է Սինկափուրի հայկական Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ բակը:

Հայաստանեան պատուիրակու-

թեան այս այցը անգամ մը եւս Սինկափուրի պատմութեան մէջ դեր ունեցած հայերու յիշատակի ոգեկոչումին առիթ դարձաւ:

Հայերը Սինկափուրի մէջ հաստատուած են 18-րդ դարու վերջաւորութեան: Անոնք հիմնականօրէն Մալակայէն, Հնդկաստանէն, Նոր Զուղայէն հաստատուած են Սինկափուր: 1833 թուականին հայ համայնքին հողակտոր մը յատկացուած է Հիլ Սթրիթ փողոցին վրայ, ուր 1835 թուականին կառուցուած է Ս.Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին,

Ամերիկացի հետազոտող ու ծովային սպայ Չարլզ Ուիլքս Սինկափուր այցելութենէն ետք գրած էր «Ամենայնարգուածը հայերն են, անոնք կը գրին գլխաւոր վաճառականներն են: Քիչ են, բայց՝ ազդեցիկ իրենց հարստութեան շնորհիւ շատ հաճելի ազգ է: Կը հագուին անգլիացիի պէս, սովորաբար լաւ կը խօսին անգլերէն ու փորթուգալերէն»:

19-րդ դարու 30-40-ական թուականներուն հայերը մայրաքաղաքին կեդրոնը կառուցած են

THE STRAITS TIMES  
CELEBRATING 170 YEARS, SINCE 1845  
WEDNESDAY, MARCH 25, 2015

Mr Lee's last trip to Parliament today

FORMER FINANCE MINISTER AND FORMER PRINCIPAL PRIVATE SECRETARY TO MR LEE: PACF 14

EDUCATION MINISTER AND FORMER PRINCIPAL PRIVATE SECRETARY TO MR LEE: PACF 11

THE LEE KUAN YEW I REMEMBER

FORMER PRESIDENT: PACF 18

MR LEE'S TAILOR: PACF 19

MR LEE'S SHORMAKER: PACF 19

որ այսօր կը դասուի երկրի նշանաւոր պատմական յուշարձաններու կարգին (ճարտարապետ՝ Ճորճ Քոլման): Հակառակ որ Սինկափուրի հայ համայնքը երբեք սակաւաթիւ չէ եղած, այնուհանդերձ, հայկական եկեղեցին իր 150-ամեայ պատմութեան ընթացքին հոգատարութեամբ պահպանուած եւ խնամուած է, իսկ եկեղեցւոյ բակը կառուցուած երկարականի շէնքը ծառայած է որպէս հայերու գլխաւոր հաւաքատեղի:

Համայնքի ներքին կեանքը ժամանակին կազմակերպած է Ազգային Ժողովը, այսօր կան համայնքային կառույցներ, որոնք կը ղեկավարեն փոքրաթիւ հայկական համայնքը: Ներկայիս Սինկափուրի մէջ կը բնակի շուրջ ութսուն հայ, մինչդեռ 1820-ականներու սկիզբը երկրին մէջ կը գործէր երեք հայկական առեւտրական ընկերութիւն՝ իրենց ապրանքային մակիշներով: Հայ առեւտրականները ունէին իրենց սեփական ներկայացուցիչները՝ Սինկափուրի Առեւտրական պալատին ներս: Հայ հասարակութիւնը այդ տարիներուն եւրոպական հասարակութեան հաւասարագոր էր եւ ունէր նմանօրինակ հաւասար իրաւունքներ, նշանակալի դեր՝ Սինկափուրի կեանքի բոլոր ասպարէզներէն ներս: Հայերուն կարծիքը նկատի կ'առնուէր Առեւտրական պալատին եւ այլ հասարակական հաստատութիւններուն մէջ: Իրենց ապրելաձեւին, անգլերէնի իմացութեան, քրիստոնէութեան շնորհիւ հայերը դիւրութեամբ աշխատանքի կը հրաւիրուէին իրաւաբանական, հետախուզական հաստատութիւններու մէջ, իրենց մասնակցութիւնը կը բերէին Սինկափուրի շրջանային կոմիտէներու եւ օրէնսդիր մարմիններու աշխատանքներուն: Մեծ թիւով հայեր կ'աշխատէին ոսկերչութեան բնագաւառին մէջ:

Սինկափուր ծնած հայերը Մեծն Բրիտանիոյ քաղաքացիներ կը նկատուէին, միեւնոյն ժամանակ Պարսկաստան ծնած եւ Սինկափուր բնակող հայերէն շատեր նոյնպէս, օրէնքի սահմաններուն մէջ, կը դառնային Մեծն Բրիտանիոյ քաղաքացիներ: Հայ համայնքը իր կանոնաւոր դրամագլուխէն ներդրումներ կը կատարէր բրիտանական ֆոնտերու մէջ:

բազմաթիւ տուներ, խանութներ, հիմնած են մեծ ընկերութիւններ, որոնք մասնաճիւղեր ունեցած են ուրիշ երկիրներու մէջ: Հայերը մեծ յաջողութիւններու հասած են նաեւ սպասարկման ոլորտին մէջ: Անոնց կը պատկանէին տասնմէկ պանդոկ, ներառեալ՝ ամենամեծերը:

Թերթերով հայ տպագրութեան տարեգրութիւնը, կը տեսնենք, որ 19-րդ դարու կէսին Սինկափուրի մէջ հիմնուած է երկու տպարան՝ «Արփի» եւ «Մասիս»: Այսօր սինկափուրցիները երախտապարտութեամբ կը չիշեն, որ երկրի գլխաւոր թերթը՝ անգլերէն The Straits Times-ը, հիմնած է հայազգի Խաչիկ Մովսէսը՝ 1845 թուականին: Թերթը տակաւին կը տպուի եւ ազդեցիկ դեր ունի երկրի մամուլին մէջ: Ծանօթ է նաեւ, որ սինկափուրեան The Raffles Hotel-ը հիմնած են Սարգիս եղբայրները:

Սինկափուրի հայերը, ապրելով պատմական հայրենիքէն հեռու, միշտ գիտցած են, որ հայրենիք մը կայ եւ իրենց մասնակցութիւնը բերած են Հայաստանի կեանքին: 1894 թուականին տեղացի հայերը հիմնած են Հայաստանի Օգնութեան կոմիտէն: Արձագանգելով 20-րդ դարասկիզբի ողբերգական իրադարձութիւններուն՝ Սինկափուրի հայ համայնքը ի պատասխան կ'աթոզիկոսի՝ ողբերգական իրադարձութիւններուն հետեւանքով անօթեւան մնացած հայրենակիցներուն օգնելու կոչերուն՝ հիմնադրած է օգնութեան ֆոնտ մը, որ կոչուած է Հայկական օգնութեան ֆոնտ. եւ այդ ժամանակ էր, որ Սինկափուրի եւ Պանկոքի հայերուն կողմէ հաւաքուած է շուրջ 14.5 միլիոն ամերիկեան տոլարի համարժէք գումար:

Բ. համաշխարհային պատերազմին ճաբոնցիները գրաւած են Սինկափուրը: Այդ տարիներուն օտարազգի բնակիչներուն հետ տուժած են նաեւ հայերը, անոնք վտարուած են իրենց տուներէն եւ արգելափակուած՝ ճամբարներու մէջ: Մինչ ճաբոնական բանակը կը գրաւէր երկիրը, որոշ հայեր յաջողած են Աւստրալիա տեղափոխուիլ: Իսկ ով որ չէ յաջողած հեռանալ, որպէս բրիտանական հպատակ, ու-



# Գլխաւոր Դասը, որ Կարելի է Քաղել Ֆրանսուիկներէն՝ «Չծուլանալ Հաճոյքով Ապրելէն»



Գեղեցկութիւնը երիտասարդութեան ժամանակ բնութեան ձեռքի գործն է, իսկ ծերութեան ժամանակ՝ կնոջ ձեռքի գործը:

Երբ ծերութիւնը դեռ միայն ձեռք ապագան է, կրնաք ընել հնարաւոր ամէն ինչ, որպէսզի օր մը այդ վիճակին մէջ հպարտութեամբ մտնէք:

Ըստ վերլուծաբաններու՝ վեհանման ծերացումը կը հանդիսանայ կեանքին եւ իրենց այլ ձեռով վերաբերուելու ֆրանսուհիներուն յատուկ կեցուածքը:

Ֆրանսուհիներուն համար գեղեցիկ ապրելու ընդունակութիւնը ոչ մէկ կապ ունի դրամի եւ կարգավիճակի հետ, ատիկա կեանքը հաճոյքներով լեցնելու ընդունակութիւնն է:

Ֆրանսայի մէջ աշխոյժ հանգիստը ազգային մշակոյթի մէկ մասն է, եւ ընդունուած է տարիքի հետ հրաժարիլ անկէ: Ֆրանսացիները կ'երթան արշաւի, կը պաշտեն թիափարուէիները, կը վազեն, դահուկ կը քշեն եւ այլն: Այս բոլորը իրենց համար կենսակերպ է, այլ ոչ թէ՛ մարմնամարզանքով զբաղիլ:

Չուարճախօսութեան զգացումը ֆրանսուհիներուն համար հզօր հակաթոյն է: Անոնք տարիքը եւ ծերութիւնը չեն ընդունիր իբրեւ ողբերգութիւն:

Ֆրանսացիները կերակուրը կ'ընդունին իբրեւ կրօն: Անոնք շատ կը յաճախեն ճաշարան եւ սրճարան, ու հաճոյք կը ստանան փոքրիկ չափաբաժիններէն, գինիէն եւ լաւ ընկերակցութենէն: 20 եւ 40 տարեկան ֆրանսուհիներուն միջեւ չկայ ծայրայեղ տարբերութիւն:

Ֆրանսուհիները առողջ եսասիրութիւնը կը ստանան մօր կա-

թին հետ: Երբ կը սկսին մեծնալ, անոնք աւելի քիչ ուշադրութիւն կը պահանջեն, կը սկսին հանգիստ զբաղիլ իրենք իրենցմով: Աւելի շատ կը ծախսեն իրենց հաճոյքներուն վրայ, կը գնեն աւելի սուղ զգեստներ: 40 տարեկան ֆրանսուհին ճիշդ կը գտնէ ինքն իր համար սուղ կոշիկներ առնելը, այլ ոչ թէ՛ անչափահաս որդիին որեւէ բան գնելը:

Տարիքի հետ, ֆրանսուհիներու պահարանին մէջ կ'ըլլայ քիչ զգեստ, բայց անոնք շատ աւելի սուղ են եւ շատ աւելի որակեալ: Նոյնիսկ միջին եկամուտ ունեցող կանայք կը գնեն սուղ եւ յարմարաւէտ բաներ:

Ֆրանսուհիներուն համար տարիքը հիւանդութիւն չէ եւ բուժում չի պահանջեր: Ի տարբերութիւն ամերիկուհիներուն, որոնք ամէն աշխատանք կը տանին երիտասարդութիւնը պահպանելու վրայ, ֆրանսուհիները կը կարծեն, թէ որոշ տարիքի մէջ կ'ստիպուեն բացակայութիւնը աւելի շատ հոգեկան խնդիրներու առկայութեան նշան է, այլ ոչ թէ՛ նախանձի առիթ:

Իրենց համար տարիքի հետ հասարակական կեանքը չ'աւարտիր, այլ՝ հակառակը: Անոնք կը դառնան աւելի աշխոյժ եւ գործունեայ:

Ֆրանսուհիները հանգիստ կը հագուին այն զգեստները, զորս յարմար եւ վայելուէ կը գտնեն: Իրենց համար չկայ «այս հագուստը այդ տարիքին յարմար չէ» մտածելակերպը: Շատ յաճախ, մայր եւ դուստր կրնան գնել նոյն զգեստը:

Ընդհանուր առմամբ, ֆրանսուհիներուն համար ամենազխաւորը յարգանքն է իր եւ իր տարիքին հանդէպ:

# Սերը կը Սնուի Սիրով. Ծշմարտութիւններ՝ Սիրոյ եւ Յարաբերութիւններու Մասին

1) Չկայ երկրորդ կէս հասկացութիւն.- Մեր կեանքի ճանապարհին մենք կը հանդիպինք շատ տարբեր մարդոց, որոնք կը լեցնեն մեր կեանքը եւ իմաստ կու տան անոր: Երբեմն այդ մարդիկ մեր հետ կը մնան ամբողջ կեանքի ընթացքին, երբեմն ընդամէնը քանի մը օր, ամիս կամ տարի: Ամենաբանջելին այն է, որ անոնցմէ իւրաքանչիւրը մեզի որեւէ բան կը սորվեցնէ կեանքի եւ իր մասին: Եւ նոյնիսկ ամենացաւոտ բաժանումները հնարաւորութիւն կու տան հասկնալու, թէ մենք ով ենք կամ ալ ով չենք իրականութեան մէջ:

2) Միշտ կայ մէկը, որ մեզի կը համապատասխանէ.- Կարելոր չէ, թէ ինքնագարգացման որ փուլին ենք, մենք կրնանք գրաւել այն, որուն մենք արժանի ենք: Ատիկա տեղի կ'ունենայ այն ժամանակ, երբ մենք կը հասկնանք, որ ինքնաբաւ ենք առանց որեւէ կէսի: Այդ ատեն մենք կը հանդիպինք նոյնպիսի ինքնաբաւ մարդու:

3) Սէրը պայմաններ չի ճանչնար.- Սիրել կրնայ մեզմէ իւրաքանչիւրը: Եթէ կը զգանք, որ պէտք է փոխուինք, որ մեզ սիրեն, կը նշանակէ մենք սխալ մարդու հետ ենք: Կամ ալ խնդիրը մենք ենք, մեր ցած ինքնագնահատականը, իբր մենք արժանի չենք այդ մարդուն: Ան, զոր կը գրաւենք մենք, մեր ինքնաբաւ կամ ման արտացոլումն է: Ուրեմն պէտք է նախ մենք մեզ սիրենք:

4) Մենք կրնանք շատերը



սիրել.- Սէրը չի վերջանար, եթէ մենք անկէ չափազանց շատ տուած ենք մէկ մարդու: Սէրը կը սնուի սիրով: Որքան շատ մենք կու տանք, այնքան շատ կ'ունենանք անկէ: Մենք կրնանք անսահմանօրէն սիրել շատ մարդիկ տարբեր պատճառներով եւ շատ բնական է մարդոց ըսել այդ մասին:

5) Ամէն ինչ քեզմէ կախեալ չէ.- Եթէ դուն ազնիւ ես, քնքուշ, բարի անոր հանդէպ, զոր կը սիրես, բայց ան կը կոտորէ սիրտդ, ատիկա չի նշանակեր, որ դուն որեւէ բան սխալ ըրած ես: Ամէնէն յաճախ ան է որ պատրաստ չէ սիրոյ նման մակարդակի: Եւ իւրաքանչիւրը իր սրտին մէջ ունի իր վէրքերը, զորս անհրաժեշտ է բուժել: Բայց ամէն մէկը չէ որ պատրաստ է նման բուժ ման:

6) Յաւը յաւերժ չէ.- Երբ մեզ ցաւ կը պատճառեն, պէտք է ընդունիլ զայն եւ վերապրիլ: Այդպէս միշտ չ'ըլլար, բայց կարելոր է ընդունիլ զայն, որպէսզի սկսիք վերականգնման գործընթացը եւ առաջ շարժիք:

# Կանացի Չարդարացուած Բարդոյթներ, Որոնցմով կը Տառապի Իւրաքանչիւրը

1) «Ես գէր եմ».- Ատիկա երեւի ամենատարածուած բարդոյթն է, որուն կեանքի մէջ գտնէ մէկ անգամ կը բախի իւրաքանչիւր կին:

Նոյնիսկ բացայայտ նիհարիկները միշտ չէ որ գոհ են իրենց կշիռքէն, չնայած այդ մասին չեն խոստովանիր: Հոգեբանները խորհուրդ կու տան ընդունիլ եւ սիրել ձեր մարմինը: Լաւ խորհուրդ է, սակայն ոչ-բոլորին համար ընդունելի: Կայ այլ ելք մը եւս՝ հին բարի մարմնամարզանքը: Եթէ կը կասկածիք ձեր մարմնական գրաւչութեան, ուրեմն վազքով զացէք մարզադահլիճ:

Այս մէկը օգտակար է նաեւ նիհարիկներուն, կ'ամրացնէ մկանները եւ աւելի հմայիչ կը դարձնէ զիրենք:

2) «Ես ծեր եմ».- Ատիկա արդէն սեփական հասցէին այնքան ալ ենթադրեալ մեղադրանք չէ: Եթէ կինը 25 տարեկանէն վեր է, ան կը սկսի շարունակ մտածել իր տարիքին մասին: Ասոր դէմ կարելի է պայքարիլ միայն մէկ միջոցով՝ պարզապէս մոռնալ ինչ գրուած է անձնագրին մէջ: Իսկ աւելի լաւ է զայն այնպէս թաքցնել, որ չետոյ նոյնիսկ դուք չգտնէք: Եթէ հայելին մէջ ձեր արտացոլանքը ձեզ միանգամայն կը բաւարարէ, ուստի տարիքի մասին անհանգստանալ չարժէ:

3) «Իմ կուրծքը փոքր է».- Սակայն, որո՞ւն կուրծքը մեծ է: Գիտէ՞ք, որ այս հարցով համընկ-


նած են շատ գործօններ՝ ե՛ւ ժառանգականութիւնը, ե՛ւ կլիման, ե՛ւ գեղագիտական վերահատուծութիւններու տրուելիք դրամը: Իսկ եթէ անկեղծ խօսինք, պէտք է ընդունինք, որ հագուադէպ հնարաւոր է մեծ չափի գեղեցիկ կուրծք տեսնել. այդպէս կ'ըսեն անգամ տղամարդիկ: Պէտք չէ զարմանալ. տղամարդիկ գեղագէտներ են, անոնց համար կարելոր է կուրծքին գեղեցիկ ձեւը, այլ ոչ թէ՛ չափը: Այնպէս որ, յուսահատելու ժամանակը չէ, այլ անմիջապէս խանութ երթալու՝ գեղեցիկ կրծկալի եւ այլ իրերու ետեւէն, որոնք փոքր կուրծքը կը վերածեն յաղթաթուղթի:

4) «Առաւելութիւնը իբրեւ թերութիւն».- Որոշ բարդոյթներ հագուադէպ կը հանդիպին, բայց անոնք եւս գոյութիւն ունին: Ո՞վ կը մտածէր, որ որոշ կանայք իրօք բարդոյթ ունին իրենց ամուսինի աւելի քիչ վաստակելէն: Այս փաստը այնպէս ուժգին կը հարուածէ անոնց ինքնագնահատականին, որ երբեմն կը յառաջանայ շատ երկիրներու մէջ: Բայց եթէ բարդոյթը ինդիւիդուալ է, ուստի խնդիրին լուծումը միայն մէկն է՝ աւելի շատ վաստակել, այլ ոչ թէ ժամանակը վատնել այն մտքի վրայ, թէ որքան վատ կը զգաք դուք ձեզ: Իսկ եթէ դուք սկսիք աւելի շատ գումար ստանալ, քան ձեր ամուսինը, այն ատեն բարդոյթներ պիտի յառաջանան իրեն համար:

Պատրաստեց՝ ՆԱԻԻՆԷ Ն.

# Ստեպղինով Կարկանդակ

Բաղադրիչներ.  
250 կր ստեպղին, 2 հաւկիթ, 1 գաւաթ ալիւր, 180 մլ ձէթ, 0,5 գաւաթ ընկոյզ, 1,5 գաւաթ շաքար, 1,5 թ. դգալ BP, 300 կր կաթնաշոռ (առանց աղի չիւրկիւր), 70 կր կարագ, 1/3 թ. դգալ կասիա, կոճապղպեղ, մշկընկոյզ (ասոնք ըստ ճաշակի):



Պատրաստման եղանակը.  
Ստեպղինը քերիչէ անցընել, շաքարն ու ձէթը մեքենայով խառնել, ապա հատ-հատ աւելցնել հաւկիթը: Շարունակել խառնել՝ աւելցնելով ալիւրը, BP-ը, կասիան, մշկընկոյզն ու կոճապղպեղը: Աւելցնել մանրուած ընկոյզը, այնուհետեւ ստեպղինը եւ կրկին խառնել:

Խմորը լեցնել կարագով պատուած ամանի մէջ, դգալով հաւասարեցնել ու եփել 180 աստիճան տաքութեամբ փուռի մէջ:

Պատրաստ ըլլալը ստուգել փայտիկի միջոցով: Փուռէն հանել ու ձգել որ պաղի: Մինչ այդ պատրաստել քրեմը, որուն համար մեքենայով խառնել կարագը, կաթնաշոռն ու շաքարի փոշին:

Պաղած կարկանդակը բաժնել երկու մասի, քրեմով պատել, վրան դնել երկրորդ շերտը ու դարձեալ քրեմով պատել: Կարկանդակին շարժը պատել ընկոյզով, իսկ մակերեսը՝ հատապտուղներով կամ մանրուած տարբեր պտուղներով, վրան շաքարի փոշի ցանել ու ըմբոշխնել:  
Անուշներ:

### Պատմաբան Դոնալդ Տուսկի Նուերը

Շարունակուած էջ 15-էն

վրայ տնտեսականի բարերար ալիքը՝ հիասթափուած են: Սա մտահոգիչ չէ՞...

-Թաւշյայ յեղափոխութիւնը գալիք ծանրագոյն եւ շրջադարձային փոփոխութիւնների նախերգանքն էր: Աւերելը հեշտ գործ է, բարեփոխումներով նորի ստեղծումը բարդ, ծախսատար եւ ժամանակատար է: Դրա համար խորքային քաղաքացիական կրթութիւն պէտք է ունենալ, որպէսզի առկայ խճճուած իրավիճակի որակեալ եւ հիմնաւոր վերլուծութիւն իրականացուի եւ երկիրը անշրջելիօրէն վերափոխուի:

Ի դէպ, քաղաքացիական կրթութեան գլխաւոր բաղադրիչը իրաւականութիւնն է, այլ կերպ՝ օրէնքի իմացութիւնը եւ յարգումը: Եթէ աւելի ընդհանրական ձեւակերպենք՝ իրաւագիտակցութիւնը, որը, ցաւօք, հանրային

գիտակցութեան տիրոջութում կուէ գնում գրացմունքայնութեանը:

Ի վերջոյ «փոփոխութիւններ» եզրոյթը բարոյահոգեբանական, քաղաքական, հասարակական, սոցիալական կեանքի, իրաւական դաշտի, բիզնես-միջավայրի առողջացման անհերքելի պահանջ է:

Ի դէպ, յաւելեմ, որ յուլիսի 11-ին, պատմաբան, Եւրոպայի խորհրդի նախագահ Դոնալդ Տուսկը Սեւանի կղզու եկեղեցիներից մէկի խաչքարը ձեռքով մեղմօրէն շօշափեց եւ ցածրաձայն մենախօսեց. «զգում եմ, որ Եւրոպայի սիրտն այստեղ է բաբախում»:

Այս անակնկալ փաստը պատշաճ վերլուծութեան, ոչ յուզակուսակցական մեկնաբանութեան կարիքն ունի: Թատերական արուեստում այս դրուագը գտնուած նրբերանգ է՝ ինքնատիպ արտայայտչաձեւ եւ ուսանելի:

ՄԱՐՏԻՆ ԵՆ ԱՐԱՄԱՅԻՍ ԱՍԼԱՆԵԱՆՆԵՐ

### Մահացած է Հայուրեան Մեծ Բարեկամ Ռոպերթ Մորկենթաուը. Ան Հէնրի Մորկենթաուի թոռիկն էր



Ամերիկայի մէջ իր մահկանացուն կնքած է ամերիկացի իրաւաբան, հայ ժողովրդի բարեկամ Ռոբերտ Մորկենթաուը՝ առաջին համաշխարհային պատերազմի տարիներուն Օսմանեան կայսրութեան ԱՄՆ դեսպան Հենրի Մորկենթաուի թոռնիկը: Իր նշանաւոր մեծ հօրմէն լսելով հայոց ցեղասպանութեան մասին՝ Ռոպերթ Մորկենթաուը նոյնպէս պայքարած է ցեղասպանութեան միջազգային ճանաչման համար:

«Իրենց ամբողջ պատմութեան ընթացքին հայերը մեծ խիզախութիւն ցուցաբերած են բռնագրաւողներու տիրապետութեան դէմ դնելով, ինչպէս՝ Զէյթունի, Վանի եւ անշուշտ Մուսա լեռան մէջ: Նշեալներէն իւրաքանչիւրը կ'արտայայտէ հպարտ ժողովուրդի մը վճռականութիւնը, որ հոգիով աննուաճելի էր, եւ պատրաստ էր հրաժարելու իր հաւատքէն կամ ինքնութենէն: Սակայն ամէն անգամ օսմանցի դեկավարները պատասխանած են ճնշող ուժով, ուժ, որ վերածուեցաւ համատարած ցեղասպանութեան», իր ելոյթներէն մէկուն ընթացքին ըսած էր Մորկենթաուը կրտսերը:

Ան ունի բազմաթիւ գիրքեր, գիտական աշխատութիւններ, իբրեւ նշանաւոր իրաւաբան նկարահանուած է ամերիկեան հեռուստատեսային ծրագիրներու մէջ:

Մորկենթաուը շուտով 100 տարեկան պիտի դառնար:

### ԳՐԱԻՈՒԱԾ ԹՈՒՎԿԱՆ

Հայաստանի Ծնողագործի հաշմանդամ երեխաներին նուիրուած տարեկան 19րդ Թելեթոն: Տեղի կ'ունենայ Կիրակի, Սեպտեմբեր 8-ին, ժամը 4-ից մինչև կէս փշերի ժամը 12-ը:

Սոյն Թելեթոնից գոյացած հասոյթով, պիտի սատարենք ներկայիս աւերակ եւ անգործածելի փեմակի մատնուած Սպիտակ քաղաքի երեք մարզա-մշակութային կառոյցների վերակառուցման, որպէսզի հայրենի մեր հազարաւոր երեխաները սոխթը ունենան ստոյգ, ապահով ու անվտանգ միջավայրում կրփելու, զարգացնելու մարզա-մշակութային իրենց ունակութիւնները, հասնելով հայրենական թէ համաշխարհային յաջողութիւնների եւ յաղթանակների:

Մանրամասնութիւնների համար հեռախօսել Յովհաննէս Բաբայեանին՝ 818-238-6880:

### CONDO FOR SALE

Palm Spring-ի ամենանշանաւոր Palm Canyon փողոցին կից վաճառվում է 1 ննջարանով 640 քառ. ոտք, երկու կողմանի սքանչելի տեսարաներով օժտուած, նոր նորոգուած, որոշ տնային յարմարութիւններով cando.

Ծառախիտ եւ ծաղկախիտ շրջապատ, որը օժտուած է 6 լողաւազաններով եւ 6 jacuzzi-ներով, թէնիսի դաշտով՝ անվճար, ամէն օր, ամէն ժամ...

Վերջին արժէքն է \$138.000: Հետաքրքրուողները կարող են հեռաձայնել Արային՝ 818-239-6880 եւ 323-539-5814 համարներով:

## ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

### ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

\* \$50,00 \* \$100,00 (first class) for USA

\$ 125,00 (Air Mail) for Canada.

\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State: ----- Zip Code: -----

Country: -----

Tel: ----- Email: -----

## VA Print Media

Book Printing • Hard Covers • Year Books  
Restoration of Old Books & Bibles



Հետաքրքրուած ենք իրենց փոխարժեքով ստանալ՝

- Հայկական երգարաններ
- Կիլիկիոյ պատմական գիրքեր
- Ցեղասպանութեան հետ աւուրչուած գիրքեր

Եթէ ունիք եման գիրքեր եւ կը փափաքիք զանոնք վաճառել, կը խնդրենք մեզի հետ կապ հաստատել Հեռաձայնելով՝ ՎԱՀԻ ԱԶԱՊԱՀԵԱՆԻՆ:



Նոր Գիրքերու  
Տպագրութեան  
եւ Հին Գիրքերու  
Նորոգութեան

### Vahe Atchabahian

2004 E. Washington Blvd. • Pasadena, CA 91104  
Tel: 626-793-6220 • Cell: 626-354-5924  
vamedia@yahoo.com • www.vaprintmedia.com

### ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

Վարդուհի Փոտուլեանի մահուան տխուր առիթով Նոր Սերունդ Մշակութային Միությունը իր խորագրաց վշտակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի համայն ընտանեկան պարագաներուն, մասնաւորաբար Տէր եւ Տիկ. Յարութիւն Փոտուլեանին եւ Պէլլանի Հայրենակցական Միութեան:

Այս առիթը Տէր եւ Տիկ. Տիգրան եւ Վարդուհի Սարաֆեան 100 տուր կը նուիրեն «Մասիս»ին:

### ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

Կիւլէն Գուզուեանի մահուան տխուր առիթով Նոր Սերունդ Մշակութային Միութեան վարչութիւնն ու անդամները իրենց խորագրաց վշտակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ընտանեկան համայն պարագաներուն, մասնաւորաբար Տէր եւ Տիկ. Վազգէն եւ Սեդա Խոտանեանին:

### ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

Կիւլէն Գուզուեանի մահուան տխուր առիթով Ս.Գ.Հ.Կ. Սապահ Գիւլ մասնաճիւղի վարչութիւնն ու անդամները իրենց խորագրաց վշտակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի համայն պարագաներուն, մասնաւորաբար Տէր եւ Տիկ. Ընկ. Յակոբ եւ Նայիրի Գուզուեանին:

## Սինկափուրեան Խոլորձը, Գլխաւոր Թերթն ու Հայերը

Ըարունակուած էջ 16-էն

դարկուած են ճամբարներ, ուր վատ պայմաններու պատճառաւ, շատերը մահացած են: Միւս կողմէ, համայնքին սակաւաթիւ ըլլալը խառն ամուսնութիւններու եւ ձուլումներու պատճառ դարձած է:

Պատերազմէն ետք ողջ մնացած հայերը վերադարձած են Սինկափուր, սակայն չեն յաջողած վերականգնել իրենց նախկին բարեկարգ վիճակը: Համայնքը այնքան թուլ էր, որ նոյնիսկ եկեղեցին դադարած էր գործելէ, մինչեւ 1996 թուականը, երբ Ամենայն Հայոց Գարեգին Ա. Կաթողիկոսի Սինկափուր կատարած այցելութիւնը,

եան հրաշք» կոչուած երեւոյթով, որով տնտեսական մեծ յեղափոխութիւն տեղի ունեցաւ այդ երկրին մէջ՝ փտածութեան եւ կաշառակերութեան դէմ մեծ պայքարին միջոցաւ: Սինկափուրը միջազգային կազմակերպութիւններու դիտարկումներով փտածութիւն չունեցող երկիրներէն մէկն է ամբողջ աշխարհի տարածքին: Երկրին ուժեղ, գրեթէ միահեծան կառավարութիւնը մտաւորական բնակչութեան շեշտադրումով եւ լաւ կառավարմամբ ճանչցուած է որպէս «սինկափուրեան տիպ» եւ կը նկատուի երկրի քաղաքական կայունութեան, տնտեսական աճի ու ընկերային ներդաշնակ կառավարման գլխա-

ւորածուած է աշխարհով մէկ: Հայաստանի վարչապետը իր կողակցին՝ Աննա Յակոբեանի հետ այցելած է նաեւ Սինկափուրի բուսաբանական այգին, ուր տեղի ունեցած է այդ երկրի ազգային խորհրդանիշը նկատուող ծաղիկին՝ Սինկափուրեան խոլորձին անուանակոչութեան արարողութիւնը: Խոլորձի տեսակ մը անուանակոչուած է Նիկոլ Փաշինեանի եւ Աննա Յակոբեանի անունով: Այսպիսի նախաձեռնութիւններ Սինկափուրի մէջ տեղի կ'ունենան ի պատիւ երկրի բարձրաստիճան հիւրերուն եւ անուանի գործիչներուն:

Հանդիպում մը տեղի ունեցած է նաեւ հայ համայնքին հետ: Շուրջ ութսուն հոգի հաշուող համայնքին մէջ տակաւին կան կարկաթային, Մատրասէն եւ տարածքաշրջանի այլ վայրերէն տեղափոխուած հայերու ժողովուրդներ: Այս խումբին մասին կ'ըսեն, թէ արդէն ձուլուած հայեր են, որոնք, փոքր բացառութեամբ, գրեթէ չեն մասնակցիր համայնքային կեանքին:

Համայնքին մաս կը կազմեն սփիւռքէն ժամանած հայեր, որոնց թիւը կը հասնի շուրջ յիսունի: Իսկ երրորդ խումբը Հայաստանի քաղաքացիներ են՝ 30-35 հոգի: Անոնք Սինկափուրի մէջ կը գտնուին աշխատանքային տարբեր հրաւերներով կամ ուսանելու նպատակով հոն տեղափոխուած են:

Սինկափուրը, իր հրաշալի բնութեամբ, արագ զարգացող տնտեսութեամբ, արհեստագիտութեան նոր միջոցներու կիրարկումով կը գրաւէ բազմաթիւ երիտասարդներու ուշադրութիւնը:

Հայ Առաքելական Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին կը նկատուի Սինկափուրի առաջին եւ հնագոյն եկեղեցին եւ կը հանդիսանայ Սինկափուրի ազգային մշակութային արժէք: Ճիշդ է, որ այնտեղ մշտապէս Ս. Պատարագ չի մատուցուիր, սակայն տարածքաշրջանին հայ հոգեւորականներ պարբերաբար կ'այցելեն եւ Ս. Պատարագ կը մատուցեն:

Փաշինեանի այցը, տնտեսական համագործակցութեան մասին յուշադրերէ գատ, նշանաւորուեցաւ նաեւ Սինկափուրի մէջ արձանի մը բացումով: Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու յարակից հայկական փողոցի նորաբաց այգիին մէջ տեղի ունեցաւ «Վանտա Միսս Ճոակիմ» խոլորձի արձանի բացման հանդիսաւոր արարողութիւնը: Արձանը կառուցուած է բարերար Խաթակ Մարգարեանի նախաձեռնութեամբ եւ նուիրուած՝ փառաբանուած խոլորձին:

**ՍԻՆԿԱՓՈՒՐԻ ՊԱՏՄՈՒԹԵՆՔԷՆ**  
Բրիտանացի գաղութարար Սթեմֆորտ Ռաֆլզ 1819 թուականին հիմնադրած է գաղութային Սինկափուրը՝ որպէս Բրիտանական արեւելահայկական ընկերութեան առեւտրական կէտ: 1858 թուականին, անոր լուծարումէն ետք, կղզիները փոխանցուած են

Բրիտանական Հնդկաստանին, որպէս թագաւորական գաղութ: Երկրորդ աշխարհամարտի ժամանակ Սինկափուրը ձաբոնի կողմէ բռնազրուեցաւ: Բրիտանիայէն անկախութիւն ձեռք բերած է 1963 թուականին՝ միաւորուելով բրիտանական նախկին գաղութներուն, սակայն գաղափարական տարբերութիւններէն մեկնելով, երկու տարի անց, սինկափուրցիները կը գատուին անոնցմէ՝ 1965 թուականին, ձեւաւորուելով որպէս ինքնիշխան ազգ: Չունենալով բնական հարստութիւններ՝ Սինկափուրը իր տնտեսութեամբ կը դառնայ «ասիական չորս վագրեր»էն (Հարաւային Քորէա, Հոնկ Գոնկ, Թայլանդ, Սինկափուր) մէկը՝ հիմնուած արտաքին առեւտուրի եւ աշխատուծի վրայ: Այսօր ունի «հանդիպումներու միջազգային գլխաւոր քաղաք»ի, «ներդրումային լաւագոյն ներուժային քաղաք»ի համբաւ, իսկ սինկափուրցի ազգը՝ «արհեստագիտական ազգ»ի:

Սինկափուրը երրորդն է օտար ներդրումներու ամենամեծ գանձատրական կեդրոն, քարիւղի մշակման եւ առեւտրական կեդրոն ըլլալու ցուցանիշով, եւ երկրորդը՝ ծովային պահեստներու առումով: Երկիրը բնորոշուած է նաեւ որպէս «հարկային ծովախորշ»: Երկիրը բարձր դիրք կը զբաղեցնէ կրթութեան, առողջապահութեան, կեանքի որակի սպասելի բարելավման, անձնական անվտանգութեան ու բնակարանային ապահովուածութեան ասպարէզներուն մէջ: Հակառակ անոր որ եկամտային տարբերութիւնները բաշխուած են անհասարակ ձեւով, բնակարաններուն 90 տոկոսը կը դիտուի որպէս անձնական սեփականութիւն: Հետաքրքրական է, որ Սինկափուրի 5.6 միլիոն բնակչութեան 38 տոկոսը օտար քաղաքացիներ են: Երկրին մէջ ընդունուած է պաշտօնական չորս լեզու՝ անգլերէն (որ առաջինն է ընդհանուր տարածուածութեամբ), մալայերէն, չինարէն (մանտարին) եւ թամիլերէն: Գրեթէ բոլոր սինկափուրցիները երկու լեզուի կրող են: Սինկափուրի անուան անգլերէն տարբերակը երկրի հարազատ մալայերէն անուանման անգլիականացուած տարբերակն է եւ կը թարգմանուի «առիւծի քաղաք»: Առիւծը ներառուած է ազգային բազմաթիւ խորհրդանիշներու մէջ, օրինակ՝ զինանշանին վրայ: Սակայն տեղեկութիւններ չկան, թէ երկրին մէջ երբեք ապրած են առիւծներ:

Սինկափուրը չի շատակուած է նաեւ որպէս Քաղաք-այգի, քանի որ փողոցները շրջապատուած են տնկուած ծառերով, եւ անկախացումէն ետք կանաչապատումը մեծ թափ առած է, ինչպէս նաեւ կը չի շատակուի որպէս Փոքրիկ կարմիր կէտ, քանի որ կղզիպետութիւնը, աշխարհի ու Ասիոյ բազմաթիւ քարտէսներուն վրայ, ներկայացուած է կարմիր կէտի տեսքով:

«Ժամանակ»/Պոլիս



որու ընթացքին եկեղեցին վերջապէս վերաբացուած էր:

2011 թուականին Սինկափուրի հայ համայնքը հանդիսաւորութեամբ նշած է համայնքի կազմաւորման 175-ամեակը:

Նիկոլ Փաշինեանի՝ Սինկափուր այցի ընթացքին անդրադարձ կատարուեցաւ երկու երկիրներու միջեւ տնտեսական կապերու ամրապնդման: Նշելով յատկապէս հայ գործարարներու բարի համբաւը եւ Սինկափուրի մէջ 19-րդ դարու աւարտին առեւտրական յարաբերութիւնները զարգացնելու գործին մէջ անոնց ունեցած կարեւոր դերը, Սինկափուրի եւ Հայաստանի վարչապետները ցանկութիւն յայտնեցին վերականգնած տեսնել հայ-սինկափուրեան տնտեսական սերտ կապերը, իսկ հայկական կողմը շատ հետաքրքրուած էր աշխարհի մէջ ծանօթ «սինկափուր-

ւոր բանալին:

2011 թուականին այլ միջազգային անկախ կազմակերպութիւն մը, իրաւական ցուցիչի աստիճանով, Սինկափուրը դասած է աշխարհի լաւագոյն երկիրներուն մէջ՝ «կարգ ու կանոնի եւ անվտանգութեան», «փտածութեան բացակայութեան», «արդիւնաւէտ արդարադատութեան» չափանիշներով: Սակայն այս բոլորին հետ պէտք է նշել, որ երկիրը աւելի ցած հեղինակութիւն ունի «խօսքի ազատութիւն» եւ «երկրի ազատութիւն» ցուցանիշներով: Օրինակ՝ հինգ կամ աւելի մարդոց հրապարակային հանդիպումը կը պահանջէ ոստիկանութեան արտօնութիւն, իսկ բողոքները կարելի է կազմակերպել միայն յատուկ ձեւաւորուած Խօսակցութեան անկիւններուն մէջ: Այդուհանդերձ, այս վերջին հանգամանքը երբեք ստուեր չ'ածեր երկրին գրաւ-

Logo for SYRIAN ARMENIAN RELIEF FUND with text: Զօրացիւք Օժանդակէ՛ք Փրկէ՛ք. Syrian Armenian Relief Fund P. O. Box 1948 Glendale, CA 91209-1948

# ՄԱՐԶԱԿԱՆ

## Կոլառատ Խաղում «Բաւարիա»-ն Վստահ Յաղթանակ Տօնեց Մադրիդի «Ռեալ»-ի Նկատմամբ

Ախոյեանների միջազգային գավաթի շրջանակում «Բավարիա»-ն 3:1 հաշուով առաւելութեան հասաւ Մադրիդի «Ռեալ»-ի նկատմամբ:



15-րդ րոպէին խաղի հաշիւը բացել է Տուրիսոն: 67-րդ րոպէին Լեւանդովսկին կրկնապատկել է միւնխենցիների առաւելութիւնը: 2 րոպէ անց Գնաբրին արդէն երրորդ գնդակն է ուղարկել «սերուցքայիններ»-ի դարպասը:

81-րդ րոպէին գերմանական կողմի դարպասապահ Ուլրեյխը տուգանային հրապարակից դուրս խախտեց կանոնները, ինչի պատճառով հեռացուեց խաղադաշտից: Նշանակուած տուգանային հարուածն անվրէպ իրացրեց «Ռեալ»-ի պրագիլացի նորեկ Ռոդրիգոն:

## «Արսենալ»-«Ֆիորենտինա»՝ 3:0

Ախոյեանների միջազգային գավաթի երկրորդ տուրում «Արսենալ»-ը 3:0 հաշուով վստահ յաղթանակ տարավ «Ֆիորենտինա»-ի նկատմամբ:



«Զինագործներ»-ի կազմում դուբլի հեղինակ դարձաւ երիտասարդ չարձակուող էդուրադ Նկետիան, մէկ անգամ էլ աչքի ընկաւ Ջո Ռուրկը:

Հայաստանի հաւաքականի աւագ Հենրիխ Մխիթարեանը փոխարինման դուրս եկաւ 63-րդ րոպէին: Մեր ֆուտպոլիստի օգնութեամբ էլ 65-րդ րոպէին Նկետիան խփեց իր երկրորդ կոլը:

Լոնտոնի «Արսենալ» ու Մյունխենի «Բաւարիան» մեկնարկեցին International Champions Cup ամենամեայ ընկերական մրցաշարում: Լոս Անձելըսոսում տեղի ունեցած խաղում 2:1 հաշուով յաղթեց անգլիական թիմը:

Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանն «Արսենալ» մեկնարկային կազմում էր եւ փոխարինուեց 64-րդ րոպէին:

## Պոգրան Այս Ամռանը Չի Յեռանայ Մանչեսթեր Եունայթեդից

«Մանչեսթեր Եունայթեդ»-ի կիսապաշտպան Պոլ Պոգրան, ամենայն հաւանականութեամբ, այս ամռանը չի փոխի ակումբային գրանցումը:

Calciomercato-ի փոխանցմամբ՝ ոչ մի ակումբ ներկայ պահին պատրաստ չէ վճարել մանկունիացիների ղեկավարութեան պահանջած գումարը: Նշենք, որ «կարմիր սատանաներ»-ը ֆրանսացու տրանսֆերի դիմաց նախատեսում են 200 մլն եւրօ ստանալ:

26-ամեայ ֆուտպոլիստի ծառայութիւններով լրջօրէն հետաքրքրուած են Մադրիդի «Ռեալ»-ն ու «Եուվենթուս»-ը:

## Նեյմարի Գործակալը Բանակցում է 5 Ակումբի Հետ

ՊՍԺ-ի չարձակուող Նեյմարի գործակալը ներկայ պահին բանակցում է 5 ակումբի հետ: Այս մասին տեղեկացնում է El Mundo Deportivo-ն:

Աղբիւրի փոխանցմամբ՝ ֆուտպոլիստի ներկայացուցիչն իր յաճախորդի ծառայութիւններն է առաջարկել «Բարսելոնա»-ին, «Ռեալ»-ին, «Մանչեսթեր Եունայթեդ»-ին, «Բաւարիա»-ին եւ «Եուվենթուս»-ին:

Աւելի վաղ պրագիլացին յայտնել էր, որ ցանկանում է այս ամռանը հեռանալ փարիզեան ակումբից:

## Զլատան Իբրահիմովիչի Հեթ-տրիկն ու Հերթական Բացառիկ Կոլը

«Լոս Անձելոս Գեյաքսի» շուէդ չարձակուող Զլատան Իբրահիմովը հերթական բացառիկ կոլը խփեց կարիերայում: «Լոս Անձելոսի» դէմ ՄԼՍ-ի առաջնութեան հանդիպման 8-րդ րոպէին 37-ամեայ ֆուտպոլիստը փոխանցումն ընդունեց կրծքով, հետ թողեց երկու պաշտպաններին եւ հօր հարուածով հեռուից գրաւեց դարպասը:

Այս խաղում Իբրահիմովիչը դարձաւ հեթ-տրիկի հեղինակ: «Լոս Անձելոս Գեյաքսի» յաղթեց էլ 3:2 հաշուով:

ՄԼՍ-ի ընթացիկ մրցաշրջանում Իբրահիմովիչն արդէն խփել է 15 կոլ:

## Եւրօ-2019. Հայաստանի Պատանեկան Հաւաքականն Աւարտեց Ելոյթները



Հայաստանի ֆուտպոլի մինչեւ 19 տարեկանների հաւաքականը աւարտեց ելոյթները Երեւանում ընթացող 2019թ Եւրօպայի Մ19 առաջնութիւնում:

Խմբային մրցաշարի վերջին՝ 3-րդ տուրի խաղում մեր պատանի ֆուտպոլիստները 0:4 հաշուով պարտուեցին Պորտուգալիայի իրենց հասակակիցներին:

Այդպիսով, Հայաստանի Մ19 հաւաքականը խմբային փուլի երեք հանդիպումներում կրեց երեք պարտութիւն: Մեր ֆուտպոլիստները մրցակիցների դարպասը խփեցին միայն մէկ կոլ, իսկ սեփական ընդունեցին 12-ը, ընդ որում՝ բոլոր խաղերում մեր թիմը նուազագոյնը բաց թողեց 4-ական գոլակ:

Պորտուգալիայի հաւաքականը 7 միաւորով գրաւեց առաջին տեղը եւ դուրս եկաւ կիսաեզրափակիչ: Երկրորդ ուղեգիրը նուաճեց Սպանիայի հաւաքականը, որը գոլզահեւ ընթացող խաղում 2:1 հաշուով պարտութեան մատնեց Իտալիային ու նոյնպէս վաստակեց 7 միաւոր, սակայն խփած կոլերով զբաղեցրեց 2-րդ տեղը:

## Ալժիրի Հաւաքականն Իր Պատմութեան Մէջ Երկրորդ Անգամ Դարձաւ Ափրիկի Գաւաթակիր



Ֆուտպոլի Ալժիրի հաւաքականը երկրորդ անգամ նուաճեց Ափրիկի ազգերի գաւաթը: Եգիպտոսի մայրաքաղաք Գահիրէում տեղի ունեցած եզրափակիչում ալժիրցիները մրցեցին Սենեգալի հաւաքականի հետ եւ առաւելութեան հասան նուազագոյն հաշուով:

Արդէն երկրորդ րոպէին կոլի հեղինակ դարձաւ Քաթարի «Ալ Սադի» 27-ամեայ չարձակուող Բադրադարձով յայտնուեց դարպասում:

Ալժիրի հաւաքականն առաջին անգամ Ափրիկիի ախոյեանի կոչումը նուաճել էր 1990-ին տանն անցկացուած եզրափակիչ մրցաշարում:

## 40-ամեայ Մենի Պակիաոն Կրկին Դարձաւ Աշխարհի Ախոյեան

Լաս Վեկասում կայացել է պրոֆեսիոնալ բռնցքամարտի հերթական երեկոն: Գլխաւոր իրադարձութիւնը եղել է 40-ամեայ Մենի Պակիաոյի եւ ամերիկացի կիտ Տուրմանի մենամարտը WBA վարկածով կիսամիջին քաշային կարգի ախոյեանի գօտու համար:



Պակիաոն յաղթել է մրցավարների միաձայն որոշմամբ՝ 113-114, 115-112, 115-112:

Մենամարտի սկզբում Պակիաոն շատ ակտիւ է եղել ու արդէն առաջին ռաունդում նոկաուտնի է ենթարկել մրցակցին:

Միջնամասում Տուրմանը հաւասարեցրել է մենամարտը, սակայն վերջնական արդիւնքում մրցավարները յաղթանակը շնորհել է ֆիլիպինցուն:

Սա Պակիաոյի համար 62-րդ յաղթանակն էր: